ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻՉԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱԲԹԱԹԵՐԹ

№ 9 Կիրակի 3 մարտի ՌՂԲ երկրորդ տարի 1891

Բարիզ Բուրբուտ

ՀԻՑՆԻՑ

Դու ինձ մի „նամակ“ ես գրել.
Լաւ, ուզում՞ ես վա՞խ պատճառել,
Բայց եթէ դու ինձ չես սիրում,
Իլ ինչո՞ւ ես երկար գրում:

—

Մի մեծ տետրակ, մանր տառերով
Տասներկուս էլ երեսներով...
Երբ տարիս են հրաժարական,
Իլ չեն գրում այդչափ երկար...

*

—

Արձակ բանաստեղծութիւններ

(Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ)

I

„Ինչպէս գեղեցիկ, ինչպէս թարմ էին վարդերը...“

Չը գիտեմ որտեղ և երբ, սրանից շատ ժամանակ առաջ, ես կարդացել եմ մի բանաստեղծութիւն: Նրան, ես շուտով մոռացայ ամբողջապէս... միայն առաջին տողը մնաց անջնջելի իմ յիշողութեան մէջ.

„Ինչպէս գեղեցիկ, ինչպէս թարմ էին վարդերը...“

Այժմ ձմեռ է, սառնամանիքը սպիտակ սաւանով ծածկել է լուսամուտի ապակիները, մութ սենեակում վառւում է մոմը: Ես նստած եմ՝ մի անկիւն քաշուած, իսկ գլխումս հնչում է ու հնչում.

„Ինչպէս գեղեցիկ, ինչպէս թարմ էին վարդերը...“

Եւ տեսնում եմ ես ինձ քաղաքի դուրսը գտնուող տան ցածր պատուհանի առաջ: Ամառնային երեկոն վերջանում է և փոխարինում է գիշերին. տաք օդում զգալի է լինում յաւերժի ծաղկի և լօրենիի անուշահոտ բուրմունքը,—իսկ լուսամուտում նստած է մի աղջիկ՝ յենուած իր մերկ ձեռքի վրայ և գլուխը ուսի վրայ կռացրած:—Նա լուռ և գթնոտական աչքով նայում է երկնքին՝ կասես ուզում լինի առաջին աստղերի երեւալուն: Ինչպէս պարզամտութեամբ ոգևորուած են նրա մատածմունքով լի աչքերը... Ինչպէս սրատուչ-անմեղ են նրա կիսաբաց քնքոյշ շուրթերը... Ինչպէս հանդարտ է շնչում նրա՝ դեռ ոչ բոլորովին զարգացած, դեռ ոչինչով չբվրդոված կուրծքը... Ինչպէս մաքուր և քնքուշ են նրա մանկահասակ երեսի գծերը...Ես չեմ համարձակւում նրա հետ խօսակցութիւն սկսելու, բայց ինչպէս թանգ է նա ինձ համար, ինչպէս բարախում է իմ սիրտը...

«Ինչպէս գեղեցիկ, ինչպէս թարմ էին վարդերը...»

Իսկ սենեակի մթութիւնն աւելի և աւելի թանձրանում է... Վերջացող մոմը ճաթճթում է, արագաշարժ ստուերները տատանւում են ցածր առաստաղի վրայ, դուրսը աղաղակում, մռնչում է սառնամանիքը—և լսւում է ծերութեան անձկալի մրմունջը...

«Ինչպէս գեղեցիկ, ինչպէս թարմ էին վարդերը...»

Բարձրանում են իմ առաջ ուրիշ դէմքեր...Լսւում են գիւղական խաղաղ ընտանեկան կեանքի ուրախաձայն աղաղակներ: Երկու փոքրիկ խարտեաշ գլուխներ՝ միմեանց վրայ յենած՝ աշխոյժ կերպիւ նայում են ինձ վրայ իրանց պայծառ աչքերով: Նրանց վարդագոյն թշերը դողդողում են ծիծաղից զսպուած, ձեռքերը մխացել են քնքշաբար, միմեանց ընդհատելով՝ հնչում են մատաղ բարբեղից ձայները, իսկ քիչ հեռու՝ խարխուլ սենեակի խորքում՝ ուրիշ՝ նոյնպէս մանկահասակ ձեռքեր—շլոթելով մատները—վազում են հին դաշնամուրի լեզուակների վրայով, և Լանեերովսկիից վալսը չէ կարողանում խլացնել նահապետական ինքնաեռի միատեսակ մրմունջը...

„Ինչպէս գեղեցիկ, ինչպէս թարմ էին վարդերը...“

Մոմը նսեմանում է և հանգչում... Ո՞վ է այդ, որ հազում է այդպէս կերկերաձայն և խարտոտ կերպիւ: Իմ ոտերիս տակ՝ կծկուած՝ սեղմւում, ոստոստանում է իմ ծերը շունը, իմ միակ ընկերը...Ես մրսում եմ...ես... սառչում եմ...և Նրանք բոլորեքեան մեռան...մեռան...

«Ինչպէս գեղեցիկ, ինչպէս թարմ էին վարդերը...»

II

Շունը

Սենեակում գտնւում էինք մենք երկուսս միայն. իմ շունը և ես...Դուրսը սարսափելի կերպիւ կաղկանձում է փոթորիկը:

Շունը նստած է իմ դիմաց—և նայում է ուղղակի իմ աչքերին:

Ես նոյնպէս նայում եմ նրա աչքերին:

Նա կարծես թէ կամենում է ինչ որ բան ասել ինձ: Նա համր է, անխօս, ինքն լրան չէ հասկանում,—բայց ես նրան հասկանում եմ:

Ես հասկանում եմ, որ այդ ոտպէին թէ նրանում և թէ ինձանում ապրում են միևնոյն զգացմունքը,—որ չըկայ ոչինչ զանազանութիւն մեր մէջ: Մենք համանման ենք, մեր երկուսի մէջ էլ վառւում ու փայլում է միևնոյն տատանւող հուրը:

Վրայ կը հասնի մահը, կըշարժւի լեր լայն, սառ թևերով...

Եւ վերջ...

Ո՞վ կարող է յետոյ ջոկել, թէ իսկապէս ինչ տեսակ կրակ էր վառւում մեզնից ամեն մէկի մէջ...

Ոչ... դրանք մի անասուն և մի մարդ չեն, որ փոխադարձ ակնարկներ են ձգում միմեանց վրայ...

Այդ երկու զոյգ միանման, միմեանց վրայ յառած աչքեր են...

Եւ այդ զոյգի ամեն մէկումը—թէ անասնի և թէ մարդու միևնոյն կեանքն է, որ երկչոտութեամբ մղւում է դէպի միւսը...

—

III

Երջին աեսու թիւն

Մենք երբեմն մօտ, շատ մօտ ընկերներ էինք, բայց վրայ հասաւ չար ժամը—և մենք բաժանուեցինք՝ ինչպէս թշնամիք:

Անցան մի շարք տարիներ...Եւ ահա՝ անցնելով

այն քաղաքով, ուր սպրում էր Նա՝ ես իմացայ, որ Նա անցոյս հիւանդ է.—և ցանկանում է ինձ տեսնել։

Ես Հանապարհ ընկայ Նրա մօտ, մտայ Նրա սենեակը...Մեր հայեացքները պատահեցան միմեանց։

Ես հազիւ Հանաչեցի Նրան. Ասուած իմ. ինչպիսի դրութեան մէջ էր ձգել Նրան ցաւը...

Դեղնած, չորացած, թափուած մազերով, նեղ սպիտակ մրքով, Նա նստած էր մի՝ դիմամբ պատրաստուած շալակի մէջ... Նա չէր կարողանում դիմանալ հագուստի ամենաթեթեւ Հնշմանը։ Դժուարութեամբ մեկնեց Նա ինձ իւր սաստիկ նիհար ձեռքը. դժուարութեամբ մրմնջաց մի քանի անհասկանալի խօսքեր.—բարեւ էր դա, թէ Նախատինք—ինչպէս իմանալ։ Ճնշուած կուրծքը սկսեց աւելի ուժգին բաղխել, և այրուած աչքերի կորացած բիբերից ցած գլորուեցան երկու ժլատ, չարչարանքով լի կաթիլներ։

Սիրտս դադարեց բաղխել ինձնում...Ես նստեցի աթոռի վրայ՝ Նրա մօտ—և, ակամայ ցած թողնելով հայեացքս այդ սարսափի և զարհուրանքի առաջ, նոյնպէս մեկնեցի ձեռքս։

Բայց ինձ այնպէս թւեցաւ, որ այդ Նա չէր, որ առաւ իմ ձեռքը։

Ինձ թւաց, որ մեր մէջ նստած է մի բարձրահասակ, հանգիստ, սպիտակ կին։ Երկար ծածկոցը ծածկել էր Նրան ոտից մինչև գլուխ։ Ոչ մի տեղ չէին նայում Նրա աղօտ խոր ընկած աչքերը, ոչինչ չէին խօսում Նրա գունաթափ շրթունքները...

Այդ կինը միացրեց մեր ձեռքերը... Նա ընդ միշտ հաշտեցրեց մեզ։

Այո...մահը մեզ հաշտեցրեց...

Լ. ՄԵԼԻՔ-ԴԱՎԹԱՅԵԱՆՑ

ԳՈՑՆԵՐԻ ԿՈՅՐ ԴԱՏԱՒՈՐՆԵՐ

(ՎՈԼԹԵՐԻՑ)

Երբ հիմնուեց ս. Լիւդովիկոսի հիւանդանոցը (կոյրերի համար), բոլոր հիւանդները, որոնք գտնուում էին այնտեղ, հաւասար էին միմեանց և իրանց մանր գործերը վճռում էին մեծամասնութեան ձայնով։ Նրանք հիանալի կերպով դատում էին պղնձէ դրամը արծաթից. Նրանցից ոչ մէկը Բրիգայի դինին Բուրգոնի գինիի տեղ չէր ընդունում։ Նրանց հոտոտելիքն՝ իրանց դրացի երկու աչք ունեցողների հոտոտելիից աւելի լաւ էր։ Նրանք հիանալի կերպով քննադատում էին իրանց չորս զգայարանքների մասին, այսինքն նրանց մասին գիտէին այն, ինչ որ պէտք էր իմանալ։ Ուստի և ապրում էին այնքան հանդիստ, որքան կարող են հանգիստ լինել կոյրերը։

Դժբախտաբար, նրանց ուսուցիչներից մէկին թւաց այնպէս իբր թէ ինքը տեսողութեան մասին որոշ հասկացողութիւն ունի. նա սկսեց դատել այդ առարկայի մասին, ինարիզներ սարքեց, դատաւ նաև իրան հետևողներ, լսողներ և երկրպագուներ և վերջապէս կարողացաւ այնպէս անել որ նրան ընտրեցին հասարակութեան գլխաւոր։ Ահա այդ ժամանակ նա սկսեց ազատօրէն կարծիքներ ևս յայտնել գոյների մասին և հէնց դրանումն էր, որ նա կոտրեց իր յարգը։

Կոյրերի հիւանդանոցի այս առաջին դիկտատորը իսկոյն կազմեց մի փոքրիկ խորհուրդ, որի օգնութեամբ նա կարողացաւ տիրել ամեն բանի։ Հետևանքն այն եղաւ, որ այլ ևս ոչ ոք չըհամարձակուեց ընդդիմախօսել նրան։ Նա վճռեց, որ իրանց հագուստները սպիտակ գոյն ունէին, թէև իսկապէս նրանցից ոչ մէկը սպիտակ գոյնով հագուստ չունէր։

Ի հարկէ տեսնողները ծիծաղեցին նրանց վրայ, կոյրերը բողոքեցին իրանց դիկտատորին, որը նրանց վատ ընդունեց, անուանեց նոր միտք մտցնողներ, ապստամբեր և ազատամիտներ, որ համարձակւում են դրաւորել աչք ունեցողների սխալ կարծիքներով և կասկածելու իրանց ուսուցչի անսխալականութեան վրայ։

Այս վէճերից ծագեց կոյրերի մէջ երկու կուսակցութիւն։

Դիկտատորը՝ նրանց համաձայնեցնելու և հանդարտեցնելու համար, մի հրաման արձակեց, որով նա յայտնում էր թէ իրանց հագուստը կարմիր էր, մինչդեռ կարմիր հագուստ հագնող չկար։ Աչք ունեցողներն այս անդամ աւելի շատ ծիծաղեցին նրանց վրայ։ Կոյրերը նորից բողոքեցին։ Կատաղեց Դիկտատորը, կատաղեցին ուրիշ կոյրեր ևս, երկար վիճեցին և վերջապէս համաձայնութիւնը կայացաւ նրանով որ կոյրերին թոյլատրուեց կարծիք չըյայտնել իրանց հագուստների գոյների մասին։

Խուլը, կարդալով այս փոքրիկ պատմութիւնը, խոստովանուեց, որ կոյրերը իրաւունք չունին դատողութիւն տալու գոյների մասին. բայց ինքը-խուլը, հաստատ մնաց այն կարծիքի մէջ, թէ միմիայն խուլերին է պատկանում երաժշտութեան մասին դատելը։

Վ. ՓԱՓԱԶՅԱՆՑ

„ԼՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՍԻՑ“

Մէկ-երկ-երեք, չորս հինգ ու վեց,
Գրած տողեր նա համարեց.
Երեսուն չարք է դուրս եկել,
Աւել չըկայ, էլ ինչ գրել։

Կրկին համրեց, երեսուն տող.
Իննսուն կոպէկ կանէ դա փող,
Այն էլ թէ որ կարմիր թանաք
Ու խմբագիր չանեն հանաք։

Ուղիղ ութ ժամ է նա նստած,
Գրիչը ձեռին յոգնած քաղցած.
Ութ ժամ է ուղիղ նա գրել
Եւ չարունակ ոգևորուել։

Մտքեր գեղուն ու թաթաղուն
Նրա տանջուած գլխից անքուն,
Դուրս են թափուել դէպ լոյս աշխարհ
Կանգնել դիմացը չարչէար։

Երեք տողին մի գըլանիկ
Սենեակն ամբողջ ծխով է լիք.
Հինգ թերթ լցաւ, գլխից կարդաց
Տեղից ելաւ հինգ տող չանցած։

«Ինչու համար այս դրեցի
Ամբողջ գիշեր ես անցուցի.
Բայց լաւ բան է—ճշմարիտ է,
Գուցէ տպէ, էհ, ով գիտէ»։
«Երեկ, անցեալ ու երրորդ օր,
Նա չըտըպեց գրածս բոլոր.
Մըրոտեցի ես ինչ յոյսով,
Սպիտակ թերթեր հրագի լուսով»։
—Տեղեկութիւն, փաստեր ունէք,
Пожалуйста նրանք տուէք,
Լուրեր, բաներ, ներողութիւն,
Թէ որ չունէք, գնացէք տուն։
„Բայց...“—Խնդրում եմ միխանգարէք,
Դուք ձեր որոշ բաժինն ունէք։
—«Բայց երեկւան ֆելիէտօնը,
Ձեր յօդուածի գուռոզ տօնը՞.
Առաջնորդողն անբոլանդակ,
Կիսատ, անկապ, փըքուն դատարկ.
Ձեզ հաւատում է ընթերցողը,
Գլխին տալիս էք դուք հողը»։
—Դուք ազատ էք ձեր կարծիքում,
Կատակել ձեզ չեն արգելում.
Մեզ մօտ վարձկան չըկայ տարով,
Ձէք հաւանում, մնաք բարով . . .
Ցիշեց նա այս պատգամն ահեղ,
Ջնջեց գրածը տեղնուտեղ։
«Լուրեր, փաստեր, լուրեր գտնեմ
Որ էգուց քաղցած չըմեռնեմ»։

* * *

—

ՖԵԼԻԵՏՕՆ

(Ադիսան Դեռի քարեկենդանը)

„Я тотъ, кого никто не любитъ
Но все живущее клянетъ
Ничто пространство мнѣ и годы;
Я бичъ рабовъ моихъ земныхъ
Я царь познанья и свободы
Я врагъ небесъ, я зло природы“...

—

„Пламень чистой вѣры
Легко на вѣкъ я залилъ въ нихъ
И стоили—ль трудовъ моихъ
Одни глупцы, да лицемѣры.“

Դեռ Լերմոնտովի (Демонъ)

Ես կանգնած էի Արամազդի առաջ.
—Դու մի տեսնիլ։
—Պիտի տեսնեմ, ասացի ես։
—Պէտք է խլանաս։
—Պիտի լսեմ ամեն բան։
—Դու ինձնից փոքր ես։
—Ես քեզ հաւասար եմ։
—Ես արարիչ եմ, իսկ դու արարած։
—Ես էլ եմ արարիչ։
—Ի՞նչ ես ուզում դու։
—Ճշմարտութիւն և միտք։
—Ես եմ ճշմարտութիւնը։
—Ես քեզ հաւասար եմ.....
Դեռ չէի վերջացրել խօսքս, երբ դղրդաց ամբողջ տիեզերքը. կայծակի չանթերը մանւաձև գծերով սկսեցին իմ չորս կողմս փալփլել, սլացաւ իմ դլխին Արամազդի հլու հրեշտակների գունդը, երկնային ջոհերով և սրերով։ Պատռուեց տիեզերքի կամարը և ես դուրս վռնտուեցի Աստուածների խնջոյքից, հալածուելով բարի հրեշտակների դօրախմբից։

,,Տար, յիմար, քո իմաստութեան ոդին երկիր, մարդկանց մօտ ու ծախիր այնտեղ եթէ միայն ,,մուշտարի“ գտնես. դուացին իմ ետևից յաղթական հրեշտակները, որոնք յետ էին սլանում դէպ երկինք Աստուածների սեղանի թափթփուկն ուտելու և ամանները լպստելու։

Գլորուելով տիեզերքի անսահման տարածութեան մէջ և չօշափելով նրա միջի անթիւ աստղերն ու մոլորակները, ես եկայ և կանգ առի ձեր երկրագնդի վրայ, մարդիկ, ես հիւր եմ ձեզ յաւիտեանս յաւիտենից։

Ատում եմ ձեզ ամենքիդ ու իւրաքանչիւրիդ, որովհետև իմ ոչ երկրային սիրոյ գաղտնիքն իմանալուց յետոյ դուք կատաղում էք և մոռանում որ ես անմահ եմ, իսկ դուք մահկանացու։

Ճանաչում եմ ձեր պապերին ու նախահայրերին, ճանաչում եմ և ձեզ անվերջ և անընդհատ դաճաճացող մարդկային սերունդ, շատ բաներ եմ պատմել ձեզ ձեր նախահայրերից, շատ բան էլ ունիմ պատմելու ձեզնից ձեր յետագայ սերունդներին։

Ես Ներոնի կողքին էի, երբ նա Հռոմը վառեց ու ձեռքերս մեկնած փառաւորապէս տաքանում էի այրւած մարդկանց դիակների ջերմութիւնով։ Ի՞նչ աքանչելի, ինձ վայել կրակ. այրած բոպէին միևնոյն ժամանակ ասուեցնում է այն յիմար բանը, որին անուանում են մարդկային կեանք. ինչ լաւ թէթևում էր մարդկային սրտասուքը այդ փառաւոր վառարանում։

Ես տեսայ եգիպտական բուրդերի կառուցումն. այդ ինձ համար չինեցին որ ես նրանց մէկի ծայրից միւսի վրայ թռչկոտեմ և լի կրծքով ծիծաղեմ մարդկանց վրայ. հա, հա, հա, հա, հա, հա, հա, հա։

Պրոմեթէոսի կողքին էի ես, երբ նա Արամազդի աստուածային կրակը գողացաւ և երբ նրան վայր գլորեցին երկնքից, ես նրան իմ թևերի վրայ հացրի Կովկասեան լեռների ժայռերին և մինչև այսօր իմ ոգով սննդում եմ նրա մարմինը, որ նա չը մաչուի արծիւների գիշատումից։

Ես Սոկրատի մօտ էի, երբ նա ծակեց իր երակը։ Դիոգինէսին ես կոխեցի տակառի մէջ։ Յուդայի ձեռը բռնեցի որ չը դողայ երեսուն արծաթն ստանալուս։ Ծերունի Գուտենբերգին ես տուի այն սև լեգիոնները, որոնց այժմ արձակել եմ ձեզ վրայ։ Դուք զարմանում էք, չռնլ էք աչքներդ, չէք հասկանում իմ տօնս, ուզում էք հասկանալ իմ տօնս։ Ուզում էք իմանալ թէ որտեղից է սկըսում իմ վիշտս և որտեղ վերջանում իմ ուրախութիւնս, հա հա հա հա հա, հա հա։

Տեսայ ձեր Էյֆելի աշտարակը և նրա գլխից ուղղակի թռայ Վաշինգտօնում կանգնեցրած ազատութեան արձանի մօտ. ինչ գեղեցիկ կոյս... նա իմս է. որովհետև ես առաջին անդամ սիրեցի նրա կուսական համեստութիւնը, ծծելով համբոյր նրա մետաղեայ շրթունքներից. իսկ դուք, ողորմելիք, գիշերներն էք համբուրւում, մթութեան մէջ... ֆու, հա հա հա հա հա, հա հա։

Դեռ եմ ես, Արիմանը, արտաքսւած աստուածների և նրանց ծառաների շրջանից, այսպէս եմ կատարում իմ բարեկենդանը։ Ուզում էք ինձ հետ ծիծաղել, պիտի այնպէս ծիծաղէք որ բոլոր տիեզերքը դղրդայ, ուզում էք ինձ հետ լալ, պիտի այնպէս լաք որ քարերից արտասուք հոսէ։

Կարող էք այնպէս ծիծաղել, որ ամենքը լան։ Սպասեցէք, սպասեցէք, մի՛ լաք, իմ ծիծաղս գալիս է, հա, հա հա, հա, հա, հա, հա, հա։

Ո՞վ դու եթեր ջինջ, մաքուր,
Դու, սկիզբն էութեանց,
Իմ տանջանաց ի տրիտուր,
Առ իմ խելքն ինձնից բաց։

Մի օր մի ժամ մի վայրկեան,
Առ ինձնից անմահութիւն,
Որ տեսնեմ բարեկենդան
Ոնց է տօնում մարդկութիւն։

Այժմ ես քեզ մօտ եմ. ով ես դու, մարդկութեան որ ցեղին ես պատկանում. հա, հայ ես. դէ, արի գնանք ինձ ծանօթացրու քո ազգի բարեկենդանի հետ, ես մի օրով քոնն եմ։ Իմ պայմաններս.— Աշխարհի վրայ ես սիրում եմ միայն դիմակահանդէսները։ Ես ինքս դիմակ չեմ հագնում. միևնոյն է. ոչ մի դիմակ իմ երեսից սարսափելի չի լինի ու իմ դիւական եղջիւրներս դոմինօն կը ծակէ ու

Պարսկական տիպ.—Գեաբրուհի

միջից դուրս կըգայ. ինձ տեսնողն իրան մխիթարելու համար հէնց այնպէս էլ կըկարծի թէ ես դիմակով եմ։

Մախաթ լերան ծայրին պատահեցի ես իմ երկրաւոր ընկերիս, որովհետև ես երկրի վրայ իջնելիս առ հասարակ բարձրաւանդակների վրայ եմ կանգնում, և այդտեղից սկսեցինք մեր ճանապարհորդութիւնը դէպի քաղաքի ներսը։

—Այս ինչ է։

—Երկաթուղին է որ մարդկանց փոխադրում է մի տեղից միւս տեղ։

—Սա՞ ինչ է, մեր ոտերի տակ։

—Երևի ճանապարհի պահապանն է, անզգուշութիւնից մնացել է անիւների տակ։

—Դա այդպէս անո՞ւմ էր ծնւել.

—Ո՛չ, երևի հէնց նոր՝ անիւները կտրտեցին ոտերը։

Անցնենք։

—Կամաց գնա, աղաչում եմ, խընդրեցի ես. իմ ոտերս հողին սովորած չեն, ես սահում եմ, ես միշտ սովորել եմ վերևից նայել ձեր կեղտոտ երկրի վրայ։

—Ի՞նչ մեծ այգի է, ինչ հրաշալի այգի է, ո՞ւմն է սա։

—Քաղաքինն է, Մուշդայիդ են ասում սրան, զբօսնելու տեղ է։

—Իսկ այն մարդն ո՞վ է, ա՛յ, նստարանի վրայ, գըջլտած, մի՞թէ այս ցըրտին զբօսնելու է եկել, դրեթէ մերկ։

—Կամ արբեցող կըլինի, կամ աղքատ, ո՞վ գիտէ, մեր ինչ գործն է, անցնենք։

—Պա՛հ, ինչ ահագին տուն է, ինչ լաւ էլ չինած է, այս ինչ է։

—Դա մի երիտասարդ ինժիների տուն է, իր քէֆի համար այդպիսի ընտիր ճաշակով չինել է. 40 սենեակ կայ մէջը։

—Երևի շատ եղբայրներ, քոյրեր և ազգականներ ունի։

—Ոչ, միայն ինքն է և սիրուհին։ Անցնենք։

—Այս ինչ է։

—Գինետուն է։

—Սա ինչ է։

—Գարեջրատուն է։

—Այս ինչ է։

—Գինետուն է։

—Այս ինչ է։

—Օղիի գործարան է։

—Սա ինչ է։

—Այդի է, այսինքն գինետուն է։

—Թիւ, ինչ հոտած են ձեր փողոցները։

—Միայն այստեղ է հոտած, հիւանդանոցիցն է տարածւում հոտը, մի քիչ այն կողմը որ գնանք լաւ կըլինի։ Անցնենք։ Տեսնում եմ դու մեր երկրից շատ խամ ես,—ասաց առաջնորդս արի քեզ ,,կօնկով'' տանեմ և նստեցրաւ ինձ մի սարսափելի կառք, երկու կմախքներ դառած ձիեր լծած։ Կառապանը ուղիղ ականջիս մէջը սուլեց, միւսն էլ սկսեց զանգահարել. խռխռոցով ու փռփռոցով երկու ձիերը լեզուները հանած սկսեցին քաշել կառքը։

—Ի՞նչքան միս կայ այստեղ, այն ինչո՞ւ համար է։

—Ուտելու համար։

—Ինչի՞ միս են ուտում այստեղի մարդիկ։

—Խոզի, կովի, ոչխարի. ինչի՞ ես հարցնում։

—Ոչինչ, ես լսել էի թէ իրար միս են ուտում։

—Ո՞վ ասաց քեզ.

—Այնպէս լսեցի. դու չես կարի՞ մարդու միս։

Ընկերս գլուխը քաշ ձգեց։

—Ինչ բարձր տուն է, գլխին էլ մի ահագին ձող, սա ումն է։

—Քաղաքինն է։

—Իսկ այն խարխուլ տները որ մենք տեսանք։

—Նա էլ քաղաքացիներինն է։

Հը՞մ։

—Ինչի՞ համար է այս տունը։

—Մտածելու։

—Ուրեմն այստեղից դուրս չեն մըտածում։

—Ինչպէս չէ, մենք ամենքս էլ մըտածում ենք, յիմար չենք։

—Երևում է...չէ՞ կարելի տեսնել ինչպէս են մտածում այդտեղ։

—Կարելի է, մտնենք. այսօր բարեգործներն են մտածում։

—Բարեգործն ինչ է։

—Վա՛հ, ինչ վայրենի ես, բարեկամ, բարեգործ էլի, այսինքն անդամ, պատուաւոր մարդ, նախագահ, քարտուղար, ամենն էլ կայ, շատ կարգին է, ա՛յ, մտնենք տես։

Մտանք,—իսկ որ կարգին է, ամենն էլ կայ. նախագահ, քարտուղար, անդամներ։

Մենք որ մտանք, սկսեցին կարդալ արձանագրութիւնը։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԽԲԲՅ. ական թուին Հայկայ և 1891 թուին Քրիստոսի։ Որպէս կանխեալ եղաք անցեալ ամի ժողովին գնախահաշուի վրայօքն յոյժ նեղանին մեզի մասնաբաժինք դաւառականք ըմբոստք յընթացս և ի գիրս։

—Չենք հասկանում, չենք հասկանում, գոռում եմ անդամները։

Զանգակ։

Քարտուղարը շարունակում է. «Եւ միթէ ո՞չ մարթ իցէ սանձս յերպս արկանել այսոցիկ ըմբոստիցն դաւառացւոց զի ոչ կամին։

—Վա՛, չեմ հասկանում, գոռում է ժողովականներից մինը։

Նախագահ—Ինչո՞ւ չէք հասկանում, խնդրեմ մի՛ խանգարէք։

Անդամ—Վա՛հ չեմ հասկանում. ես էլ չեմ հասկանում. ես էլ, ես էլ...

—Չենք հասկանում, չենք հասկանում, գոռում են չատերը։

Զանգակ։

Նախագահ—Կանոնադրութեան առաջին և վերջին յօդուածների հիման վրայ ամենքդ էլ պարտաւոր էք հասկանալ. հասկացա՞ք։

Ամենքը—Հասկացանք, հասկացանք։

Քարտուղար — Զահրումար, բաս ինձնից ի՞նչ էլք ուզում։

Անդամ—Պարոն Նախագահ, աղքատներին չէ ողորմում խորհուրդը։

2-րդ Անդամ—Աչակերտները նըստաստ չեն ստանում։

3-րդ Անդամ—Ո՞ւրտեղ է խորհուրդի հասցէն։

4-րդ—Աղքատները քաղցած մեռնում են, իսկ ընկերութիւնը...

Զանգակ։

Նախագահ—Ամենքդ էլ օրէնքի հակառակ էք խօսում. լռեցէ՛ք։

Քարտուղար—Գարագալ՛ց (դուրս է վազում, բռնում են յետ բերում)։

Ժողովականներ.—Էլ չենք անի, էլ չենք անի։

Նախագահ—Այ, այդպէս, այժմ կարող էք ազատ վիճել։

1 Անդամ—Ես կարծում ըմ վեր, թա մունք յըրաւունք չունենք թա, ասենք օրիչ քաղաքներին ես ըսաի արա ես ընտի. ասան մարդի փող ուրանենա։

2-րդ Անդամ—Բայց ես, ես, ես, ես, ես, ըրես, ըրես, այո՛ օ՛ ս, ես կարծում եմ, այո՛ կարծում եմ, որ՞ բոլորովին ճիշտ է այո՛ այո՛ ասում պարոն նախագահը...

3-րդ Անդամ—պ. Նախագահ, խօսելու հերթն իմս է, ինչո՞ւ ինձ չըտուեցիք։

Նախագահ—Молчать!

4-րդ Անդամ. Մեր ՀՐՉԿԵՏՈՎՈՆ վուր կայ, էնենց ասինք վունց վուր

ի ցելիկօմ մարդի մարմինի նման ի. վունց որ նեվօզմօժնօ օպէրացիա անիս նրա ձիւը, խան վուտը, խան քիթը, խան գլուխը, какой чортъ, էլ վունց մարմինը կումնայ. յիս պրէդլաժիտ կօնիմ պրօվինցէն ցէնտրից չի բաժանիլ ու չէ վուր նրանք միր չըլէններն են. просто недоразумѣніе.

Նախագահը—Համաձայն էք ամենքդ։

Ամենքը—Համաձայն ենք, համաձայն ենք։

Անդամ.-Բայց ադքատների հարցը՞։

Նախագահ—Օրէնքի հակառակ է։

Քարտուղար—Գօրօդավոյ...

Բոլորը փախչում են և մենք էլ դուրս ենք գալիս բարեգործների դահլիճից։

—Այս ինչ է։

—Դիմակահանդէս Հայերէն Դրքերի Հրատարակչական Ընկերութեան։

—Ի՞նչու դիմակահանդէս և ոչ անդիմակ հանդէս։

—Անդիմակ դուրս գալու համար երես է հարկաւոր. իսկ Ընկերութիւնը երես չունի հասարակութեան առաջ դուրս գալու։

—Օֆ, ինչ ձանձրալի, քացախի հոտ է, գալիս. գնանք բարեկամ, ձեր երկրում մի անկիւն չըկայ ուր անկեղծ զուարճանան. ես ուզում եմ տեսնել ձեր բարեկենդանը։

—Եղածն այս է, աւել պակասը կընեերես։

Ես կըթքեմ այդպիսի բարեկենդանի վրայ և էլի կըգնամ իմ տիեզերական պտոյտներս անելու։

ԱՐԻՄԱՆ

դաւառական ֆեյլիետոն

ՄՈԾԱԿ

ԶՈՒՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԻԾԱ—ԶԱՒԻՇՏԱԹԵՐԹ

Հրատարակւում է քէֆիս լաւ ժամանակը, մէկ էլ ամենավատ ժամանակը։

Իւրաքանչիւր համարի մեծութիւնը անորոշ է, նիւթ չատ կըլինի՝ մեծ կըլինի, թէ քիչ կըլինի՝ փոքր կըլինի։

„Մոծակը“ առ այժմ խմբագրութիւն չունի, հետևապէս ոչ սենեակ ունի, ոչ դուռ, որ լաց լինի կամ փակ։

«Մոծակը“, որպէս զուտ Հայկական լրագիր, „մուֆտա„ է ուղարկւում, որով միջոց կունենանք Ճիշտ իմանալու աշխարհիս վրայ գտնւող բոլոր հայերի թիւը։

«Մոծակին» աշխատակից կարող են լինել, թէ խայթոցաւոր միջատները, թէ բոլոր այն կենդանիք, որոնք զուրկ չեն ժանիքից և մասնաւոր թոյնից. որովհետև մեր պատերազմը հաստակաշիների դէմ պիտի լինի։

Միւս թերթերին վնասելու պայմանները կրյայտընւին առանձին և ծածուկ նամակներով, ուստի մեր գործին պէտք կըգան և գիշերայն խաւարասէր խլուրդները։

Մեր պայմանները ժամանակին և հանգամանքին նայած կարող են և փոխւել, ուստի մեզ բարեկամ կարող են լինել և քամելիոնները։

ԱՌԱՋՆՈՐԴ ՈՂ.

Մի ագեղ սովորութիւն

—

Հանդէս են եկել նոր օրերս մի դաս օտարամոլները, որոնք մի նոր լրագիր երևալուն պէս, խկոյն հարցնում են. „ինչ ուղղութեան է պատկանում նոր լրագիրը“։

Ի հարկէ, նեղն ընկած խմբագիրներից ոմանք կրանց բուն նպատակը թագցնելու համար ստիպւած են լինում համեմած և զարդարւած շատ «նէյնիմներով» քնացնել նրանց, բայց «Մոծակը» թագցնելու բան չունի. ահա բացարձակ ասում է.

Ուղղութիւն, մուղղութիւն մենք չենք ճանաչում։

Հայերը գործնական մարդիկ են, այդ պատճառով նրանք լ ընէ անշահ ու անօգուտ են համարել ուղղութեան պէս վերացական բաները։ Եւ „Մոծակը“ որպէս զուտ ազգային թերթ, ոչինչ ջանք և աշխատանք չըպիտի խնայի հայ ժողովրդի շահերին յարմարեցնելու և նրա այդ աւանդական օրինակելի յատկութիւնները պաշտպանելու համար, հալածելով և վնասակար համարելով ուղղութեան մասին բոլոր մտածողներին։

Եւ այսպէս ուղղութիւն երբէք չըսպասել մեր լրագրից։ Պարզ. մեզ առաջնորդողը մեր «մուշտարիներին» Ճաշակը պիտի լինի, մեր նպատակը նրանց այն լուսաւորութիւնը, որ գիշերւայ մթութեան չի խանգարում։ Խաւարի մէջ երևացող ամեն մի լոյսի դէմ բացարձակ պատերազմ պիտի հրատարակէ «Մոծակը» իր ցեղակիցներով։ Այդ խաւարի մէջ այրող և վայլող լոյսն է պատՃառը, որ շլացնելով մեր անմեղ ցեղակիցներից շատերի աչքերը, գրաւում է դէպի ինքը, ոմանց առանց թիւերի թողնելով, ոմանց խանձելով և մոխիր դարձնելով։ Ուրեմն պարզ է և հասկանալի, որ «Մոծակը» այսպիսի բուն ցեղային կամ մոծակային, հայկական թէ թրգոմական դիտումներով կառաջնորդւի, այսինքն գործնականը ապահով արևն ծծելու միջոցներն աւելի կըգերադասի, քան ընմարների լեզւում ուղղութիւն և համոզմունք անուն ստացած բառերը։ Սպասեցէք, սպասեցէք խնդրեմ, «արևն ծծելու միջոցները» ամենևին երկիւղալի չեն։ Այդ արևն ծծելու անմեղ գործողութիւնն այնպիսի Ճարպիկ հմտութեամբ կըկատարւի, որ ոչ ոքի ցաւ պատՃառած չի լինի «Մոծակը», դրա համար մենք այնպիսի կատարելագործած գործիքներ ունինք, որի նը-մանը Եւրոպան անգամ չունի։ Եւ այդ ամենքը կըհաստատեն, որ „Մոծակի“ խայթոցի նուրը կազմութեան ոչինչ գործիք չի կարող հաւասարւել՝ թէ հին և թէ այս նոր դարում։ Մի խօսքով խայթոցը խըրւեցաւ թէ չէ, մեր ընթերցողը, մի անբացատրելի քաղցր թմրութիւն զգալով, դեռ քաղցր երազներ կը կըտեսնի։

Օրինակ կըտեսնի, որ ինքը մի խարխուլ և հնացած շինութեան մէջ է որպէս թէ, շուրջը մութ ու խաւար և յանկարծ վչում է, չըգիտեմ, հարաւային թէ հիւսիսային սաստիկ քամին և տունը օրօրւում է, կուզի դուրս գալ փախչել վտանգից, բայց ցեղում խրւած ջրաղացաքարի պէս շարժւելն անհնարին կըլինի, կուզի օգնութիւն կանչել, իսկ ձայնը թնդիլիսի „Հրատարակչական Ընկերութեան“ ձայնի պէս չի դուրս գայ, իսկ շինութիւնից դուրս կըլսւի հարիւրաւոր մարդկանց գոռում ու գոչումը. „ազատել պէտք է“։ „Հեռացրէք, հեռացրէք մշակներին“ կըգոռան մի-ւսները,—„այո, այո, ըէմոնտ, ըէմոնտ, կարկատել պէտք է“, կըհաստատեն ուրիշ ձայներ։

ՄՈՒԿՈՒՀ ՋԱՆ,

Նախ եթէ մը զանա հարցընէս վարք Աստծու ողջ և առողջ սաղ սալամաթընք, քու հրամանոց սղօթունըն կօգնք Աստուծանայ։

Իմ աչքի լիս, ղորթ էա յինչ խաբար ա, ասումըն Թա վէր մեծ Թագաւորիքի յիրա յրս. օղումը հանցու վէր նոր կազէթ տիս տաս, գիվաքի գիրոց անտեղեակ մըզ նըմանեներից էլ պէն հսկրցընիս։ Դէ, քը մատաղ, սատը ղորթը գիւդիւմ չըմ, ամմա էն օրը Թօխիսանի խոսք ու զրնցը քու կըզէթիդ պէննա. Թա դէ, աչքնէա լիս, Նալբանդ Մուկուչը կազէթ գիրոց ա տեռնում։

Դէ գիւդիւմ ըս ըլի, մինը,—Թա, սատ պէն ա, մինը Թա տեռալ ա պըծալ, հարա Ղլի խշանների մէսն ալ ա ծամալ, էն մինը Թա Թագավէրին խնդիրք ա տալ Թա հարա մինիստրնեն սօվետըն անում. ըստի հազար մին ջուռա պենէր... Դէ պըմբասանք չինի, էն մին վարա աղանները շատ Թիւնդ են փռփռալ էա խաբարին երայ. քու արևը մին հաշիր ար վէր, էլ յինչ ասեմ...—ախպէր, բա էս օրէնք ա. էլ գեադա-գիւդա, էլ Նալբանդ, էլ փինաչի, էլ տեղան եր կացող զալամը ձեռքըն ա օնում, Թա մեր աղանները հոգևոր շիօլի միւլքերը Թաքուն ստիւը ընդիւը յիրա ծխախոտրեցին, փողերը տակաւն արին...քընդեցին քրեատակ արին լօխ... Թա գեաղըն, աւազակն, ըստի ըն, ընտի ըն... մինը հրցնող, ասող չնաը, Թա ադա, հարամզադա, ես չըմ տիւ ըս, վէր տիւ ինիը շիօլին հոքեպարծուն, ժամին գնձապետը տիւ մէհէգ մզանա պարաս կօտիր...—այշի, ասումըն էլի, դիվի փախըլօթուն, չզօղթուն ա. իրանց կէռիքը կտրում չի. էրեւլան կռքավերների յիրայըն հաչում։—Ա՞յ լիս տեռնա մեռաղրդ... Լօխ էտա. Ճաքում տրաքում, սմախեխտըն ընում, Թա եանի խէ՞ մունք հարուստ, փոքը կոշտ ման գեանք, իւրանք սոված ծարաւ չզուլօթուն նլբնդօթուն ընելաւ գկռատան։ Մէհէգ մինը հրցնող ինի Նալբանդ Մկուչին, Թա ադա զուռ... մեղայ քեզ Աստուծ, պերանս յինչ ար գեամ... Թա ադա տիւ հոուլ ըս. յինչս, յինչացու յը՞ս, յինչ շահին Թոռնըն ըս, վէր քինացալ Թագավերին խնդրակոծ ըս ելալ, Թա հրամանն ուր, վէր հանցու մին փարա իշխանների յիրա կազէթ գիրում... ախը քու հար, Մեարդի աղին քեահրնգին գլխին պիւրթը պեմբակ գիզելաւ հաց չար Ճարում վէր հանցու օտի, ետաւ գիլօխ երկալաւ վըսրծերքաւ կորնաւ սատմազ ելաւ վէր տինջացաւ, վէր չբրսոր էլ տեղը մահլում չի... մէհէկ տիւ եանի էն պիւրթ գիզող Ակուլի աղան չը՞ս... տիւ էն Նալբանդ Մուկուչը չը՞ս... եանի մեր բօզ էշին, մեր քիհար ձիան վէննները նալողը չը՞ս։

Դէ էլ յինչ գիլօխ ցաւանք, Մուկուչ ջան, մեր հոգևոր միւլքէրին դոստ ու պարեկամ աղանները, ըտենց կլսակ կտրած ընցած կիրակի քեզ ու քու կազէթնին Թիւրլոնում էն հայ երդա Թօխիսանում։

Կասեմ Թա եկ մին ձեռքաւս տամ, մին էլ քնենք արի, Թա յինչ պէն օնիս... էնա գիրոցը կգիրի ըլի՞... ախը գիւդիւմ չըս... գիրելու պէն ա էֆ, հարա կազէթին իրեսը չտեսած, վայնաշվանը քցալն... ախ, դէ վէր հարալ մարդիք ինի՞ն խէ՞ կվախի։

Էհ, փառք էլհա Աստծու դրգահին, վէր իմ ախպէր Ակուլի տնկած ծառը. վէր տիւ ըս, էլհա Նրա օրհնած զալամը ձեռքդ ըս առալ, Նրա ամագը կրցնում չը՞ս։ Ախը դէ նա շատ կսիրար գիրոց պէնները, մին հէա հարա էն բալամին կազէթումը ղլին Թարլիքն էլ արալ ար վրարնըվերաւ։

Դէ էլ յինչ ասիմ, քը մատաղ, զալամըդ ումբրաւ քաղցը կենայ, վէր Թշնամու առաջ սև երես չը մնանք։ Էհ, աւել պարասը նեղողութիւն կանիս. հարա մեծ ընենց նոր պէն չկայ որ գիրիմ, առաչնորթին հեա պնըվեշակ կռևը քեօհնայ պէն ա, էլ լազաթա անց ա կացալ։

Մնամ Ստուծանայ քու սաղօթունը օղող Նալբանդ Դեատի.

ՆԱՄԱԿ ԱՍԽԱՐԱԹԷՆ 7-Ն վերջը.

Մեծահամբաւ ա՛ր,

Ցայտ է, Թէ Եւրոպական լուսաւորեալ ազգաց յատկանիշ է բարեգործութիւն, ուստի մեք ևս ի նկատ առնելով գրամական անձուկ վիճակն բարեգործական ընկերութեան ազգերնուս, որ ի Տփղիս, ցաւ յանձին զգալով՝ վերհագոյն պարտք մը համարեցինք դիմել առ օտարական եղբարս մեր, որ ստ յԱխարաթի, և յորդոր կարդալ նոցա առ մի յօժանդակութիւն։

Մեծապէս երջանիկ կհամարինք զինքերնուս, որ մեր անարուեստ քարոզ պատկեցաւ արդեամբ, որ անգամ մը ևս բաց հանդէս ելաւ գործով ապացուցանելու, Թէ ազգասիրական բուռն խանդն ու ոգին Թերևս չէ շիջած ի մէջ հարազատ եղբարց, որչափ և աստանդական դեգերին քիրան ի Ճակատ. այն, դեռ չէ շիջած և ոչ երբէք մարած է հայրենաւանդ մեծագործութիւնք, այլ նուազած են միայն այդպիսեաց խանդն բորբոքող Ճշմարիտ ազգասէր անձնաւորութիւնք, որ նախանձախնդիր լինելով հպօր սիրաղործութեանց բանիւ և գործով չպակասանք մեր ոլսանն։

Կինդրեմք ի Զէնջ, մեծայարգ խմբագրապետ, գէթ անկիւն մը շնորհել հետևեալ նուիրատու պատուական եղբարց ազգասէր անուանց յաւէժայուցմանն։

Փառնգիւլ Դրիգորեան Հաղբութեանց, ժամագործ 1 ռուբ. Պետրոս Կիրակոսեան Բաղդասարեանց, Հին Նախիջևանցի, բնիկ Թմբուլցի, հանդերձավաճառ 50 կոպ. Խորէն Կոլլոպոսոյեան, Կարնոյ հին գաղթական, ատ վերաբնակեալ 50 կոպ. Մնացական Անթառամեան Դրբլիկոնեանց, Ագուլեաց Գոլթն գաւառէն 35 կոպ. Վանէս Յովակիմով Ղուլունց, Սիւնեաց պատմական Արցախ գաւառէն 30 կոպ։ Սուրէն էֆ. Հայկազեան Վասպուրականայ Արծն քաղաքէն 30 կոպ.—Ընդամ. 2 ռ. 50 կոպ.

Սուրէն էֆ. Հայկազեան Վասպուրականցի։

Խ ր ո ն ի կ ա

—

1888 Թ. դեկտ. 18-ին Մեծ-Ղարաքիլիսայից. գրումեն...ին.

—„Այսպիսի մի ցուրտ տարի դեռ չենք ունեցած. մեր ծերերի վկայութեամբ այս տարուայ ցուրտը մի բացառութիւն է՝։

—

1889 Թ. յունվար 3-ին Մեծ-Ղարաքիլիսայից.

„Ճշմարիտն ասած, դեռ մեր Ղարաքիլիսան այս տարուայ պէս մի ցուրտ տարի երբէք չի տեսել։ Մեր ուրթ-

սունամեայ ծերունիներն անգամ հաստատում են, որ այս տարուայ ցուրտը մի չըտեսնուած երևոյթ է“։

—

1890 թ. յունվար 11-ին Մեծ-Ղարաքիլիսայից.

„Ցուրտ է և մի չըտեսնուած ցուրտ, մեր հարիւրամեայ ծերունիներն անգամ չեն յիշում մի այսպիսի սարսափելի ցուրտ տարի“։

—

Խնդիրներ

ԱՅՆ ՈՐ Է,

—Հազար բեխով, բիւր միրուքով,
Երեսի վրայ մազ չունի,
Կոմս ու կայսր է պալատով,
Իսկ գրպանում գրօշ չունի.
Ամեն երկրում դին ունի,
Իսկ մեր մէջում տեղ չունի։
—Ընտարեդ (կարդա՛ հակառակ կողմից)

—

ԱՅՆ ԻՆՉՆ Է,

Որ տասը մօրից է ծնուել,
Մէկի ծիծն էլ չէ ծծել,
Լալիս է նա միշտ քաղցած,
Ապրում է նա միշտ մեռած.
—50 և 11 յօդուած։

—

—ԱՅՆ ՈՐ Է,

Որ կով չէ,
Երբ ջահել է՝ կրկթեն,
Որ ծերացաւ կըմորթեն։
—Հայ ուսուցիչը։

—

ԲԱՌԱՐԱՆ

Ուտելիք. Եկեղեցապատկան գումարներ, որբերի խընամակալութիւն և բանկի դիրեկտորութիւն։

Բաստուրմա. Բառ տաճկական, մի եպիսկոպոսի 100 տարուց յետոյ գործադրելիք կտակը, Բագուայ նաւթագործարանատէրերի սինդիկատը։

Խաղալիք. տիպիներ կամ քաղաքային քուէներ։

Ընթրիք. Ռուս հայերէն բառարան Ա. Յ. -ի։

Корона. նոյն բառարանում—«չամիչ-քիշմիշ»։

Դումա. Ցիրկի գիտնական Կրէստօփը կարծում է, որ ռուսաց думать բառից է յառաջացած, այսինքն մի տեղ, ուր մարդիկ շատ մտածում են միայն, իսկ Խիկարը դրան տաճկական ծագումն է տալիս, որպէս թէ «Դուման»-ամպ բառից է յառաջացած, այսինքն այնպիսի ամպ, որ գոռում-գոչում է, բայց չէ անձրևում։

Ֆեյլետիոն

Անցան գնացին այն ուրախ օրերը, մեր տեսած բարեկենդանները։ Ցիշում ես այն նոր բացուող դինու կարասները. էժան չամային ու հաւերը, յիշում ես այն «բուվարներից» կախուած ճժճժող կաքաւներն ու փասեաններն, միտդ գալիս է աչկերի «մուխամմազները», մեր պապերի ֆալախան, զուռնայի կկլոցը, հարսանիքների հարա-հրոցը։ Ո՞ւր են այդ բոլորը...Մի՞թէ այս մի քսան տարի առաջ չէր... բայց չըտեսնողին որ պատմես, կըկարծի թէ այդ բոլորը երազ էր...

Տէր Աստուած, այս ինչ չուտ ամէն բան փոխուեց... բարեկենդանը ահա մեծ պասի չեմքին է պըպզել։ Մեծ պասն էլ լոբու և գետնախնձորի ահագին ջալի տակ տնքտընքալով գալիս է, բայց ոչ հարսանիքի հոտ կայ և ոչ էլ զուռնայի կկլոցն ենք լսում. էլ հասակաւոր աղջկայ տէրը ինչ քարը տայ իր գլուխը։

Հայրապետ, թէ Կարապետ այս օրերս միմեանց որ հանդիպում են ահա՝ այս դանդատն են անում։

Բարեկենդանի այս նկատելի փոփոխութեան մասին ի հարկէ անուշադիր մնալը տուտանաքանդութիւն էր, ուստի որոշեցի շուտով ուսումնասիրել այս ցաւալի և վընասակար փոփոխութեան պատճառները և այնուհետև ներկայացնել «Մոծակի» դատաստանին, թող ինչպէս ուզում է վերջացնի։

Իսկոյն այնուհետև նամակներ գրեցի իմ դաւառացի բոլոր ծանօթներիս և բարեկամներիս, որ չտապեն տեղեկացնել ինձ իրանցում կատարուող բարեկենդանների այս նոր հիւանդութեան մասին, մի առ մի թէ պատճառները դրելով, թէ իրանց կարծիքը։

Ու մեր բարեկամներից ստացանք հետևեալ դրութիւնները.—

ՆՈՒԽՈՒՑ

Բարեկենդանները մեզանում լաւ չանցան։ Հարսանիք ամենևին. մէկ երկու հոգի էլ որ նշանուեցին՝ հարսանիքը թողեցին աշնան «խաղալթափոցին», որովհետև հարսանիքի ծախսի համար 60 % ով փող չըգտան։ Առևտրի մեծ քեսատութիւն է, բոժոժից կաղինից և չագանակից թէ մի բան դոյացաւ այն ժամանակ հարսանիքն էլ գլուխ կըդայ։ Էլ չըկան առաջուայ «կորտերը» (չաղացրած հաւերը). այս «ազիզ» բարեկենդաններին նստած «չամբալութ» ենք խորոված... ուտում... Զուռնայի Գալուստին էլ խօսեցնել չի լինում, քիթը չատ կախ է...

ԴԱՆՁԱԿԻՑ

Բարեկենդան, ուրախութեան օր, գինին բօլ, բայց հարսանիք չըկայ, քէֆ չըկայ, սիրտ չըկայ, էլ չատ տըխրելուց որ էլ մի բանի չի հասնում մեր ձեռքը, մէկէլ տեսնում ես «կոտոչին» է հասել, ինչ անես, մէկ, երկու տալիս ես տակովը, քարշում գլուխդ, թմրում, քնում, հանդստանում ես...

ՇԱՄԱԽՈՒՑ

Դիւնեայիս ամլները հասկանալ չինում... գիւն բա գիւն ստեղքանդւում, ընդեղ՝ Բաքուում պանցրանում ա... այշի, բիւթիւն նօթի օյիննա ալի... Զանրմ, բալաջա լակոտներան բաշնա, Բաքուն բաղեամ ջահիլ ջիլանա թողալ, քի փռնես գիլօխը կալես... նօթի օյիննա ալի... տեսնամ չանս. մեր գամէչ Մուկուչ ալ Շամախին թողալ չուզոդութիւնան Բագու ա պակալ... նօթի օյիննա ալի... Բաշկես, դիրափառ չիմացամ քի դայդին պատմամ նօթի օյինը։

ԱԽԼՅԽԱՑԻՑ

Հէչ բան մընալ չեմ կըընայ գրէ քեզի, քիչըմ մախմուր եմ. ինչ ընեմ բարաս. աս «Ուզեան Զուզեաններուն» պատերազմը մեր մուխը մարեց։ Քաղքիս գործերն անքան ալ գէշ չեն, բարեկենդանը ինչպս կըտեսնեմ լաւ պիտի անցնի, ջահիլաշին իշտէ ֆայտօնչի Կարօի տղան չուն Ակօն է. ասիկա սօխախներուն մէջ տկճորները ուռեցած է ու թրնդի չալել կուտայ-կը։ Ասօր դայֆէն էի, է փառք Աստծու լախբրդին պակաս չէ, մեչհանաներուն գործն ալ գէշ չէ. ծառադ եմ էֆէնդի. ինձի ադտեղ տեղ կըգրտնիս։

ԲԱԳԻՒՑ

Շատերն այն յուսով, որ բարեկենդանին ազատուած կըլինին իրանց անթառամներից և թառամող Շուշաններից, վերջին տարազով պարահանդէսների շռայլ հագուստներ կարել տուին, Բօրչալուի անտառների նման գլխարկների փոխարէն բաղի լայն կտցաւոր նոր գլխարկներ գնեցին, հրաւէրներ, խնջոյքներ, բաղեր սարքեցին, մի քանի անգամ թատրոն, մինչեւ իսկ մասկարադ էլ գնացին—բայց անաջող...Ծախսեր, ծախսեր, հարա՛յ հուրայ, վերջը Կոխի լիմֆայի պէս փրստ կամ Ֆիասկո դուրս եկաւ։ Անթառամների տէրերը ծընկները վեր թակում, լացում են այժմ՝ թէ այս ինչ պատիժ է, որ գալիս է մեր գլխին. մէկ էլ եկ նորից Զատիկայ շրջազգեստ, ամառայ վերարկու, կօշիկ՝ գլխարկ. ձեռնոցներ էլ գներ քո հաշուին, այն էլ մեր գործարաններին գործի այս վատ ժամանակ...

Այս ցաւալի կրողութեան պատճառը մեկնում են նրանով, որ վերջերս օրիորդանման մորեխներով այնքան է լցել Բագուն և նրա ծովեզերքը, որ խսկականին Ճանաչելը դժուարանալով, կուրը ընկել է...

—

Դեռ մեզ քաղաքներից չրկարողացանք նամակներ ստանալ—բոլորը ստանալուց յետոյ Խիկար լմատուկի հետ խորհրդի նստելով, մի բողոք կընեիկայացնենք „Մոծակի„ խմբագրութեան դատաստանին...

Իսկ «Մոծակի» խմբագրի արդարամտութիւնը և ազգասիրութիւնը թէ որ չալի հռչակած և ժողովրդականացած է, երևում է նրա մասին երգւող մի յայտնի երգի այս կտրից.

«Ազգի համար դըրած ա,
Ազգի համար դըրած ա,
Պարանոց, պարանոց,—
Վիզակրթ»։

ՆԵՐԿԱՐԱՐ

ԼՈՒՐՋ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Սառնասիրտը զորտի արիւն ունի, իսկ քարասիրտը—հարուստի։

—

Անազգայ մարդը փայտից է շինուած, որի մի ծայրը եթէ այրես՝ միւսը սառ կըմնայ։

—

Երբ չարերին էլ են բանտ ծգում, սոխակ ու դեղձանիկն էլ—ուրեմն կարող ենք ասել, որ մարդիկ ընդունակ են եւ լաւ արժանաւորութիւնները պատժելու։

—

Մարդը բնութեան այն պտուղն է, որ ստեղծագործութիւնից մինչեւ այսօր դեռ չի հասել։

—

Մենք տրամադիր ենք ուրիշի պատկերը գործի մէջ տեսնելու, իսկ մերը հայելու։

—

Հաւասարութիւնը թւաբանութեան մէջ, իսկ մարդկանց մէջ մեռնելուց յետոյ։

—

Հարստութիւնը ամեուայ ջերմութեան պէս ամպան սիրելի է մարդկանց, որ շատերը էլ չեն նայում ծուռ փայտից է ստացւում այդ, թէ ուղիղ։

—

Ես Խիկարս լսել էի թէ՝ „Ուրիշին մի վընասէք, որովհետեւ նա ձեզ օգուտ չի տայ“, իսկ այսօր ամենից լսում եմ. „Տուր ինձ օգուտ, որ վնաս չընտամ քեզ“։

ԽԻԿԱՐ ԴՄԱՍՏՈՒՆ

«Մոծակի» պատասխանները

—

Թիֆլիս.—Ա. Ց-ենց. Շատ լրաւացի է ձեր նկատողութիւնը, նա Բալախանայում բաւական յետ է մընացել, երևակայեցէք, որ այն նշանաւոր «բրիւկի հարցի» մասին, որ ամբողջ Կովկասը դղրդեց, նա ոչինչ չէ լսացել։

Բալախանա.—Ա. Ա.-ենց։ Զակլեալչնի մաշինկի համար հաւլա լաֆետնոյէ ժելեզօն չեն ստացել, դէ էլ մաթալութիւն մի քաշէք, կոտրած խամութիներից մինը կուզնեցին սվարիտ անել տուէք, ուղարկեցէք բուրավոյ մաստերին, որ շուտով տրուբաները զակլեպատ անի, ասեցէք նրան, որ վինտավոյ գոնկրատով ճխսի առաջ, եթէ չի գնալ՝ յետոյ բարկով խրի։ Էսօր երեք դրօգով տրի շեստնացատեի կատեին ժելեզօն ուղարկեցինք, նակլադոյում զրբթ ա 36 լիստ ա գիրուած, ամմա վեցը մնաց, նրանց էլ էքուց տրեբովանիում գիրուած մանդը-մուժը բաների հետ կուղարկենք։ Մատերեալնի սրբիկաշչիկին ասա որ լիստերը դէվեատի նոմէրի և սիլադի արալըդումը թափել տայ և առանց կանտորի օրդերի ոչ մի կատեին դուրգի բաց չի թողնի։ Ինչպէս ա չեռվերտի նոմերի գրբունաը, էն դահրմար պլիվուչի պեսոկիցը պրծաք՝ թէ չէ։ Վադեանոյ լինեան ինչպէս բեզերվուարի և նասոսի հետ սաեդինիտ արեցի՞ք։ Թէ էլի դվոս դուլյմովի գազովի տրուբաներ հարկաւորի, տելեֆոնով Տիլմանսի սիլադին խաբար արէք։ Ես էլ իրիկայ պոլէզդով կրգամ, ժալոնիի կլասանը և բեգուլեատորի համար բեմենը հետս կրբերեմ։ Կուչերին ասա շարաբանը բերի վագզալ։

Յայտարարութիւններ

—

Որոնում ենք Սև քաղաքում կամ Բալախանայում կառավարչի տեղ, միայն անպատճառ շարաբանով և մտրակով։ Միւս պայմանների մասին տեղեկանալ Բագի ապագայ սիցիօներական լրագրի խմբագրատանը։

—

Երևանայ Թեմական դպրանոցի մանկավարժական և հոգեբանական առարկաները աւանդելու համար հրաւիրւում է մասնագէտ քիմիկոս կամ մեքենագէտ։ Ցանկացողները թող բարեհաճեն դիմել „Բեշիկեալի“ խմբագրութեան։

—

Կապալով և ձեռընտու պայմաններով վերցնում ենք մեծ մարդկանց տների և շների հին ու մաշած կլիշէները։ Հարցնել „Արճագանքի“ խմբագրատանը։

—

Ազանով ջնջում և ոչնչացնում ենք Մարտիրոս Կիրակոսեանցին տրուած մեր հաւատարմութիւնը, որովհետև տեսանք, որ նա էլ է զողանում անամօթաբար։

Մուրատ Ոսկանեան։

—

Ձեռնտու պայմաններով

Վաճառւում են յատկապէս Հայոց ժողովների համար պատրաստուած էկս վուԹանոց նախագահ կան դանգակներ։ Մշտական աղմուկների ժամանակ ձայնը ժողովականների ականջին հասնելու համար։

Նրաշխաւորում եմ

Հարցնել «Մոծակի» խմբագրատանը։

—

Հա՛յ, հարա՛յ, հա՛յ...

Երևանում հիւանդանոց է բացւել։

Խմբագիր—հրատարակիչ

ԲՈՒՐԴ-ԿԻԶՈՂԵՆՑ ՄԿՐՏԻՉ



Վիլհելմ. Պ. Դոկտոր, ձեր հիւանդները կոտորուում են։

Կոխ. Դէ ես ինչ անեմ, թող դեռ մի փոքր սպասեն, փորձերը շարունակում եմ։

ժամանակագրութիւն

Երկուշաբթի վերաբերեալ 26-ին Թիֆլիսի օրիորդական գիմնազիայի դահլիճում կայացաւ ուսուցչուհիների և դաստիարակչուհիների վերադարձ օգնութեան ընկերութեան ընդհանուր ժողովը։ Հաշվի ընթերցումից երևաց որ այդ վերին աստիճանի համակրելի ընկերութիւնը շատ քիչ միջոցներ ունի իր նպատակներն իրագործելու համար, այնու ամենայնիւ եղած միջոցներն էլ գործադրւում են շատ բարեխղճաբար։ Ներկայ 1891 թվի նախահաշիվով մուտք է սպասւում 3200 ռուբլի, իսկ ծախք 2624 ռ.։ Մուտքի աղբիւրներն են անդամական վճարները, դրամագլխի շահ, դասախօսութիւններից, մանկական տօներից, և կոնցերտներից ստացած արդիւնք։ Ծախքերն այսպէս են նախատեսւած. Դիւանի և ընդհանուր ժողովների ծախքեր 400 ռ. դասախօսութիւնների համար—250 ռ. գրքեր և ամսագրերի—300 ռ. Անվերադարձ օժանդակութիւնների և էժան բնակարանների դրամագլխի կազմութեան համար—574 ռ. բնակարան—600 ռ. գրասենեակի ծախք—300 ռ. մանկական տօների համար ընծաներ—100 ռ. չընախատեսնւած ծախքեր 100 ռ.։ Ընկերութիւնը մի շատ համակրելի մնաք է յղացել, այն է բանալ օրինակելի դպրոց Թիֆլիսում։ „Ընկերութեան նպատակներից մէկը—կարդում ենք հաշվի մէջ—է ունենալ սեփական ուսումնարան, որ կառավարէր նոյն ինքն ընկերութիւնը, գործադրէր ամենալաւ մեթոդներ, ամենանոր դասագրքերի և ուղղեցոյցների օգնութեամբ և դրանով գրաւէր դէպի կրթութեան գործը հասարակութեան աչքի ընկնող անդամներին։ Ցանկալի է հեռացնել այս դժւարութիւններն ու անյարմարութիւնները, որոնք պատահում են դասարանում, ուր աշակերտները զանազան լեզուներով են խօսում և այդ հանգամանքի շնորհիւ աշակերտները յետադիմում են։ Այդ պատճառով ընկերութիւնը հարկաւոր է համարել բանալ այնպիսի ուսումնարան, որ բաժանմունքներ ունենայ տեղացիների համար։

Ուսումնարանն առաջին տարին պէտք է երեք բաժանմունք ունենայ 1) ռուսերէն խօսող երեխաների համար. 2) այն տեղացիների համար, որոնք միայն հայերէն են խօսում, և 3) այն տեղացիների համար, որոնք միայն վրացերէն են խօսում։

—

Թիֆլիսի նոր քաղաքագլխի ընտրութիւնը նշանակւած է վաղը երկուշաբթի, մարտի 4-ին։

—

Բարեկենդանի այս վերջին շաբթում Թիֆլիսը կատարեալ տօնական կերպարանք է ստացել։ Դաւառներից շատերն եկել են ժամանակ անցկացնելու. Թատրոններում, նաւագահանդէսներում, պարերեկոյթներում խկոյն աչքի են ընկնում դրանք, որոնցից շատերը իրանց գեղեցկութեամբ և պարզութեամբ գրաւում են մարդու ուշադրութիւնը։

—

Այս տարի Թիֆլիսում պատկերը սովորականից անհամեմատ շատ են։ Ինչպէս մեզ հաղորդում են, անցեալ կիրակի միայն հարիւր պատկ է եղել Թիֆ. եկեղեցիներում։

—

Ներկայ համարում տպագրում ենք Թիֆլիսի այժմեան օպերայի առաջին բարիտոն Լիբրիկո Ռուբիրատոի պատկերը Ռիգոլետտոում—Ծաղրածուի դերում։ Պ. Ռուբիրատոն իր գեղեցիկ ձայնի և բեմական արժանաւորութիւնների շնորհիւ այժմեան օպերային խմբի մէջ առաջին տեղն է բռնում և իր տաղանդով կարողացել է երկու հիւանդ կուսակցութեան բաժանւած ցարասկուհիներին և Մեդվեդուհիներին միացնել ու միայն իրան երկրպագու դարձնել։

—

Անցեալ կիրակի Թիֆլիսի ժողովարանում Վրաց դրամատիկական ընկ. պարահանդէսն էր։ Ժողովարանի մեծ դահլիճը գեղեցիկ զարդարւած էր ծաղիկներով և սովորականից աւելի չքեղ էր լուսաւորւած։ Ներկայ էր Թիֆլիսի ամենաընտիր հասարութիւնը։

—

„Տարազի 10-րդ №-ը ցոյց կըտանի մարտի 17-ին։ Հետևեալ կիրակի մարտի 10-ին „Տարազ“ չի հրատարակիր, դրպէս զի տպարանի շարունակ աշխատող բանվորները ժամանակ ունենան հանգըստանալու։ Դրանով ամենեքին

չի պակասիլ „Տարազի“ տարեկան համարների թիւը (50 համար), ինչպէս յայտարարուած է իր ժամանակին: Փոխանակ ամառուան ամիսներում՝ իրար վրայ երկու շաբաթ քաց թողնելու, աւելի շատ համարեցինք, մեր բաժանորդների յարմարութեան համար, երկու ազատ շաբաթները միմեանցից բաժանել:

դեղարուեստ

Թատրոն

Անցեալ կիրակի օպերային Թատրոնում տրւում էր „Օտելլո“. Օտելլոյի դերը խաղում էր պ. Վանդերեկի, որի ձայնն այդ երեկոյ կատարելապէս յաջող էր, բայց արտիստը երևի բարեկենդանի առիթով, այս անգամ ներկայացրաւ «սպիտակ Օտելլո»: Նա բեմ էր դուրս եկել առանց որ և է գրիմի: Օպերային ներկայացումների մասին մենք կը խօսինք:

—

Երեկ ձմեռային սեզոնի վերջին ներկայացումն էր Կալլած. բանկում պ. Ֆորկատու բենեֆիսը: Թիֆլիսի Թատրոնական հասարակութիւնը իր ներկայութեամբ յայտնեց համակրութիւն այն անձնաւորութեան, որ մի քանի տարի շարունակ քրտինք է Թափում գեղեցկի և օգտակարի գաղափարը տարածել մեր մէջ:

—

ԱՆԴԱՄԱՀԱՏՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ



Ա. բժիշկ.—Վա՛յ քեզ Թս...
Հիւանդ —Վա՛յ ոտս...
Բ. բժիշկ—Մեամիտ կաց, մէկն արդէն կտրել եմ, մեւսն էլ այս բոպէին:...

Նրեկ ձմեռային սեզոնում պ. Զմշկեանը, իսկ պ. Պետրոսեանը Եղիշէի դերը:

Լսում ենք, որ պ. Պետրոսեան գարնանը պիտի գնայ Պոլիս և մի քանի դերասանուհի բերէ ու գալ տաբւանից կանոնաւոր ներկայացումներ տայ՝ իր շուրջը ժողովելով նախկին հայ Թատրոնական խումբը: Այժմեանից կարող ենք ասել, որ հայ Թատրոնը հաստատ հիմք կունենայ և պ. Պետրոսեանը յաջողութիւն: Որովհետև երիտասարդ արտիստը շընորհիւ իր տաղանդի, որ նա օր-օրի տարում էր պ. Զմշկեան, իսկ պ. Պետրոսեանը Եղիշէի դերը:

Լսում ենք, որ պ. Պետրոսեան գարնանը պիտի գնայ Պոլիս և մի քանի դերասանուհի բերէ ու գալ տաբւանից կանոնաւոր ներկայացումներ տայ՝ իր շուրջը ժողովելով նախկին հայ Թատրոնական խումբը: Այժմեանից կարող ենք ասել, որ հայ Թատրոնը հաստատ հիմք կունենայ և պ. Պետրոսեանը յաջողութիւն: Որովհետև երիտասարդ արտիստը շընորհիւ իր տաղանդի, որ նա օր-օրի

ԱՆԴԱՄԱՀԱՏՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

Նախկին ծառայող—Ոտերից գրկւել եմ, ինձ Թոշակ տւէք:
Կապալառուները փախչելով—Ինչո՞ւ զգոյշ չէիր մնում:

Հինգշաբթի օրը հայ Թատրոնական խումբը ներկայացրեց Վարդանանց պատերազմը: Թատրոնը բոլորովին լիքն էր: Վարդանի դերը կատարում էր պ. Զմշկեան, իսկ պ. Պետրոսեանը Եղիշէի դերը:

Լսում ենք, որ պ. Պետրոսեան գարնանը պիտի գնայ Պոլիս և մի քանի դերասանուհի բերէ ու գալ տաբւանից կանոնաւոր ներկայացումներ տայ՝ իր շուրջը ժողովելով նախկին հայ Թատրոնական խումբը: Այժմեանից կարող ենք ասել, որ հայ Թատրոնը հաստատ հիմք կունենայ և պ. Պետրոսեանը յաջողութիւն: Որովհետև երիտասարդ արտիստը շընորհիւ իր տաղանդի, որ նա օր-օրի վրայ կատարելագործում է, գրաւեց բուն հայ Թատրոնականների սէրն ու համակրութիւնը:

Երաժշտութիւն

Մենք հաղորդեցինք արդէն, որ երգչուհի Նիկիտա (Նիկոլսոն) մըտադիր է գալ Թիֆլիս մի քանի կոնցերտներ տալու. այժմ այդ լուրը ճշտւած է բոլորովին և մինչև անգամ որոշւած է կոնցերտի օրը—մարտի 14-ին Թիֆլիսի Թատրոնում: Բերում ենք այստեղ այդ նշանաւոր երգչուհու համար հաղորդւած տեղեկութիւնները: Նիկիտա ծնւել է Վաշինգտոնում (Ամերիկա) 1872 թ. օգոստոսի 18-ին: Դեռ 4 տարեկան հասակում Նիկիտա կարողանում էր դաշնամուրի վրայ ածելով պարզ երգել մի քանի երգեր. նա մինչև անգամ ինքնուրոյն խաղեր էր աւելացնում երգերի վրայ: Նրա երաժշտական տաղանդը չատ արագ զարգացաւ և արդէն 11 տարեկան հասակում 1883 թւին, ձմեռը, նա առաջին փորձն արաւ իր հայրենի քաղաքում: Նիկիտան մեծ յաջողութեամբ երգեց Air de bijaeux և ուրիշ մի քանի արիաներ Ֆաուստից: 12 տարեկան հասակում Նիկիտան արդէն ծանօթացաւ Քրիստինա Նիլսոնի և Ադելինա Պատտիի հետ: Վերջիններիս խորհրդով Նիկիտան գնաց Եւրոպա կատարելագործւելու, որովհետև Ամերիկայում դժուար է երաժշտութեան լաւ ուսուցիչներ գտնելը: Եւրոպայում Նիկիտա աշակերտեց Մօրիս Ստրակոշին, որ մի և նոյն ժամանակ սովորեցրել է Պատտիին և նրա բախտաւորութեան պատճառ է եղել:

Սուրհանդակ

Բաղու.—Ն. Ջ. Ի՞նչպէս էք կամենում. ձեր յոդւածները կարդանք յետոյ պատռե՞նք. թէ պատռենք ու յետոյ կարդանք. այս մասին քարի եղէք տեղեկութիւններ տալ:

Խմբ.-Հր. Տ. Նազարեան

Доз. цензурою, Тифлисъ 1891 г. 2-го марта Тип. „Ароръ“ Т. Я. Назарьянъ. Уг. Голов. пр. и Барят. ул

ՏԱՐԱԶ

ԳԵՂԱՐՔԵՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՔԱԹԵՐԹ

№ 9-ի | Դարունակություն | 1891 թ.

մամուլի տեսություն

—

Ի՞նչ կանէք, ընթերցող, եթէ մէկը ձեզ յանկարծ անսպասելի կերպով կանգնեցնի ճանապարհին, բռնի թևներիցդ և դոռայ թէ՝ դուք էք Լօնդօնի բանկից գողացած փողերի դողը, թէ դուք էք այն սարսափելի Ջէկը, որ Լօնդոնում մարդկանց փորոտիքն է թափում։ Դուք, անչուչտ, եթէ այդ մարդուց օդիի հոտ չառնէք, նրան խելագար կը համարէք. և ում մտքից կանցնի որ կեանքի մէջ այդպիսի անհեթեթ երևոյթներ կարող են պատահել։

Ոչ միայն Ռուսաստանի պէս քրիստոնեայ և որոշ օրէնքներով կառավարվող տէրութեան, այլ նոյն իսկ „վայրենի“ արևելքում, մենք չենք ճանաչում մի ոստիկան, որ համարձակէր մի քաղաքացու տանել ոստիկանատուն և մեղադրէր նրան մի որոշ յանցանքի մէջ, առանց որ և է փաստի։ Տիրապետող օրէնքների չնորհիւ ոչ մի դատաւոր անդամ իրան իրաւունք չի համարում առանց որ և է փաստ ունենալու, հարց ու փորձի ենթարկել որ և է քաղաքացու, որին ամբաստանել են մի որ և է ծանր յանցանքի մէջ և ուրիշ կերպ էլ չի կարելի, որովհետև իւրաքանչիւր քաղաքացու իրաւունքների այդ խոստովանութեան մէջն է կայանում որ և է պետութեան հաստատութիւնը և նոյն իսկ հզօրութիւնը։

Բայց ի՞նչ կանէք որ ամենքի համար անդամ պարզած ճշմարտութիւնը դեռ ևս հասկանալի չէ մայրաքաղաքում ապրող անձանց և այն էլ ոչ թէ կանցելիարական ֆրազերի, ոչ թէ մի եկեղեր արտասահմանցի փոդրթիի համար, այլ բուն ռուս քաղաքացու և այն էլ մամուլի ներկայացուցչի համար։

Ի՞նչ կասէք այն մամուլին, որ իր հայրենիքի ոչ թէ մի քաղաքացու, ոչ թէ մի ցեղի, մի ազգի, այլ մի ամբողջ երկրի վրայ ցեխ է ձգում և անուանում է այդ երկիրն սեպարատիզմի կենտրոն պետութեան դէմ։

Եւ այդ այն երկիրը, որ դարէ ի վեր ամենայն հաւատարմութեամբ վայելում է իր տիրապետող պետութեան չնորհները և ծառայում է նրան և նրա Ինքնակալ Կայսեր։

Ուզում էք իմանալ թէ մարդիկ ո՞ր աստիճան անբարեխիղճ կարող են լինել, կարդացէք Պետերբուրգում հրատարակվող «Свѣтъ» լրագրի 39 №-ը փետրուարի 16-ից.

Ոչ մի տեղ մեր պետութեան ոչ մի անկիւնում—գրում է „Свѣтъ“ լրագրի Ռ. աշխատակիցը—բացի մայրաքաղաքներից, մամուլն այն աստիճան չէ տարածւած, որքան Կովկասում [հրանի ձեզ կովկասցի խմբագիրներ] հէնց այդ պատճառով էլ նա արժանի է առանձին ուշադրութեան [չնորհակալ ենք, ձեր պատուի համար]։

Մամուլը Կովկասում բաժանւում է երկու մասի. ռուսական, տեղական իր բաժանմունքներով եւ արտասահմանեան (?!)։ Մամուլը, որ մեծ մասամբ տեղացիների ձեռքին է գտնւում [լաւ լսեցէք] որոշւում է իր խիստ-բաժանողական ուղղութեամբ (строго-сепаративнымъ направленіемъ) Նա ոչ մի ժամանակ չի արդարացրել իր կոչումը Ռուսաստանի շահերի վերաբերութեամբ, այլ ընդհակառակն միշտ մղել է [!] եւ մղում է (!) կատաղի կռիւ այդ շահերի դէմ։ Այդ մամուլը պարապւած է տեղացի հասարակութեան մէջ ատելութիւն եւ զզւանք տարածելով դէպի ամենայն ինչ, որ ռուսականէ՞.

Յետոյ մի չարք հայհոյանքներ, ստեր, և ցնդաբանութիւններ թափելուց յետոյ բացականչում է.

Հակառուսական պրոպագանդայի մէջ սրանից աւելի, կարծեմ, հեռու գնալ չէր կարելի։

Այո՛, պարոն, դրանից էլ հեռու գնալ անհնարին է, որովհետև հա՛լա-ռուսական զգացմունքներ զարթեցնելու համար, դրանից աւելի անզուսպ գրւածք չի կարող լինել, որովհետև այդ արդէն Հերքիւլեան սիւներից անցնում է։

Այս դեռ Կովկասեան ռուս մամուլի մասին է ասում, այն ռուս մամուլի համար, որ միայն արձագանք է եղել բուն Ռուսաստանի ազնիւ մամուլին, աշխատելով տարածել այն միտքը թէ Կովկասեան բոլոր ազգերը ռուս պետութեան ընտանիքի հաւասար անդամներ են և աշխատել է մացնել այդ ազգերի մէջ ռուսական կուլտուրայի և քաղաքացիութեան ազդեցութիւնը։

Ռուսաստանը մի քրիստոնեայ պետութիւն է, որը կառավարում է որոշ օրէնքներով. այդ օրէնքների առաջ հաւասար են այդ անսահման և հզօր պետութեան բոլոր հպատակները։ Մենք մամուլի ներկայացուցիչներս այսպէս ենք համոզւած և այդ նոյնը կը կրկնի կովկասցի ամենայետին գեղջուկը։

Այն քաղաքացին, որ իր պատիւը պահել չը գիտէ, նա արժանի չէ քաղաքացիութեան պատուին և պետութեան ուշադրութեան. ահա՛ ինչ բարոյական իդէա ենք սովորել մենք հրատարակւած մարդասէր օրէնքների հատորներից, որոնցով մենք մինչև այսօր կառավարւել ենք, և որոնց պաշտպանութեան տակ մինչև այսօր դտնւում ենք։ Կովկասեան մամուլը նոյնպէս դտնւում է որոշ օրինագրքի առաջնորդութեան տակ, որն անուանւում է դրաքննական օրինագիրք (цензурный уставъ), որի մէջ մամուլի իրաւունքների և պարտականութիւնների չրջանը բաւական պարզած է։

Պետական բարձր հաստատութիւնների կապը և ռուս ժողովրդի կապը կովկասեցւոց հետ դարէ ի վեր սրբագործւած է դարևոր բերդերի տակ թափւած քաջերի թէ ռուսների և թէ կովկասցիների արիւնով։

Կովկասեան մանկանց մեծամասնութիւնը (եթէ չասենք դրեթէ ամենքը) սովորում է պետական դպրոցներում և իւրաքանչիւր տարի ամեն մի դպրոց եղած քաղաքներում

սովորել ցանկացողներից 50%-ից աւելի մնում է առանց մտնելու, վականսիա չլինելու պատճառով։ Միջնակարգ դպրոցներից աւարտած հայ և վրացի պատանիների 99% գրեթէ վազում է դէպի Ռուսաստանի համալսարանները։

Ոչ մի ռուս ուսանող ծուռ չէ նայում իր ընկերի վրայ միայն այն պատճառով որ նա հարաւումն է ծնել և բնութեան անխախտելի օրէնքների չնորհիւ, ունի բոլորովին ուրիշ դէմք, ուրիշ կազմուածք, ուրիշ տէմպերամենտ. գիտութիւնը նրանց հաշտեցնում և հաւասարեցնում է և քաղաքացիական պարտաւորութիւնների հաւասարութեան զգացմունքը նրանց թելադրում է հաւասար սիրել թէ ռուս թէ հայ թէ վրացի թէ թուրք և թէ ինդուչքաղաքացիներին։

Անցնենք „Свѣтъ"-ի մեղադրական ճառին, որն սկսւում է մի ողորմելի ստով թէ մամուլն ահագին չըջան ունի Կովկասում և թէ նա աճում է իբրև սունկ. մինչդեռ յայտնի է, թէ տասն տարուայ չրջանում Կովկասեան մամուլի օրգանների թիւը աւելանալու փոխարէն պակասել է և մի նոր երևցած օրգանի փոխարէն, երկու եղածները խափանւել են։ Ո՞ւր են «Тифлисскій Вѣстникъ", „Обзоръ", «Фаланга», «Гусли», «Փորձ», „Кавказ. Курь.» «Դործ», Трудъ, «Մեղու», „Վարժարան", «Հայկական աշխարհ» այլն ուրիշները. իսկ այս տասնեակ դադարած օրգանների փոխարէն քանի՞ նոր օրգաններ ունինք մենք, թող ցոյց տայ մեզ Свѣтъ-ի խմբագրութիւնը։

Տեղական երկու ռուսաց մեծ լրագիրների խմբագրներն են Нов. Обоз. պ. Ուսպէնսկի բուն ռուս և Ռուսաստանից եկած։ Кавказъի խմբագիրն է պ. Տիւբենկով, նոյնպէս բուն ռուս և Ռուսաստանից եկած, ուրեմն ինչի՞ վրայ են հիմնուած լրագրի խօսքերը, թէ մեծ մասամբ լրագրները տեղացիների ձեռքն են։

Ի՞նչ է նշանակում սեպարատիվ (բաժանական) ոգի. Կովկասեան մամուլի ո՞ր Ն-ի, ո՞ր երեսի, ո՞ր տողի մէջ կայ մի ակնարկութիւն անդամ, թէ „պէտք է տալ ռուսներին», թէ „պէտք է զրկել նրանցից» և այլն այսպիսի անպատկառ ստեր։ Թող թերթեն Свѣтъ-ի խմբագիրը և նրա աշխատակիցը Կովկասեան բոլոր մամուլը, առաջին երեսից մինչև վերջը և եթէ գտնեն մի այդպիսի ակնարկութիւն անդամ, մենք անազնիւ կանանենք մեր մամուլը, իսկ եթէ ոչ Свѣтъ-ի անազնիւ դերն ինքըն ըստ ինքեան հասկանալի է լինում։

Երբ, ո՞րտեղ, ո՞ր լրագրի մէջ և ո՞վ է կարդացել մի որ և է բառ անդամ, որով ասէր, թէ «ռուս լեզուն աւելորդ է Կովկասցոց համար»։ Կովկասեան ո՞ր մամուլն է պարծեցել, թէ ինքը կուլտուրայի կողմից աւելի բարձր է քան ռուս ազգը և ռուս մամուլը. բացի „Свѣтъ"-ից, որն ինքը հաստատում է իր հընարած սուտը։

Գալով Կովկասեան հայ մամուլին, ո՞ր հայկական լրագրի կամ ամսագրի կամ չաբաթաթերթի մէջ է ասած «ռուսական իշխանութիւնը չըպէտք է հսկի հայոց ծխական դըպրոցների վրայ» և ո՞վ կըթարգմէր նրանց այդ բանն ասելու։ Մի բան որ ոչ մի տեղ տպագրական խօսքով ասած չէ, ինչպէ՞ս է կապում մեր չինքին «Свѣтъ»-ը՝ չենք հասկանում. այս արդէն աւելի է քան «чтеніе въ сердцахъ".

Երկու տարի առաջ Վեհափառ Կայսեր և Կայսրուհու Կովկասում գտնուելը ցոյց չըտուա՞ թէ որքան սիրալիր է վերաբերւում Կովկասը և նրա մամուլը դէպի Ռուսաստանը և դէպի նրա Կայսրը. ուրեմն այս ինչ կատաղութեան (остервененіе) մասին է խօսում «Свѣтъ»-ը, որն իբր թէ տիրապետում է վերջին ժամանակներս հայոց մամուլի մէջ։ Այս ինչ է նշանակում. արդեօք մեր իմացած մամուլից ի զատ ուրիշ մամուլ ևս կա՞յ։

Մամուլի ո՞ր օրգանի մէջ են երևացել գրգռիչ յօդուածներ Ռուսաստանի հայ հոգևորականութեան դէմ, քանի որ վաղուց յայտարարուած է մամուլին, որ մինչև անդամ չէ կարելի առանց բարձրագոյն պաշտօնական թոյլտուութեան գրել, թէ այս ինչ հոգևորականն այս ինչ տեղից փոխադրւում է այն ինչ տեղը։ Եւ որ ամենից աւելի անդոսնելին է, ո՞րտեղ է կարդացել «Свѣтъ»-ը թէ հայ մամուլը հրաւիրում է և ոգևորում հայերին որ նը-ը՝նք հաւաքւեն հայկական դրօշակի տակ Երևանեան նահանգը։ Այսքան զրպարտութիւններ թափել մի ամբողջ ազգի դլխին առանց մի փաստ բերելու, առանց մի գոնէ խարխուլ յենարան ունենալու, մի՞թէ հնարաւոր է, մի՞թէ վայել է իրան յարգող մամուլին։

Կովկասում մինչև այսօր ոչ միայն չէ եղել այնպիսի անհեթեթ ձգտումներ ինչպիսիք «Свѣтъ»ն է փաթթում մեր չինքին, այլ Կովկասում մինչև այսօր չէ՛ էլ եղել. ի պատիւ նրան, «Свѣтъ»ի պէս մի լրագիր, որն համարձակւէր ստեր ձգել Ռուսաստանի հպատակ մի ամբողջ երկրի վրայ, նրան մեղադրելով, բոլորովին դատարկ խօսքերով, անջատական ձգտումների մէջ։

Երևակայեցէք ձեզ վերջապէս, որ „Свѣтъ-ի յօդուածը թարգմանւի մի որև է անգլիական կամ դերմանական կամ այլ եւրոպական օրգանում (և մենք համոզուած ենք որ չուտով կըկարդանք). ի՞նչ կարծիք պիտի կազմի եւրոպական մամուլն Ռուսաստանի հպատակների վրայ, որոնք միշտ իրանք իրանց հաւատարիմ են անւանում։ Պետերբուրգում հրատարակւող ռուսական թերթը „тревога" է խըփում ի լուր աշխարհի թէ «Ռուսաստանի հպատակ հայերը և վրացիները ռուս պետութեան հակառակ ձգտումներ ունին, թէ նրանք ատում են ռուսներին և զզուած են նրանցից հայլն հայլն։»

Ասացէք ի սէր Աստուծոյ, էլ ո՞ր եւրոպական լրագիրը կըհաւատայ հայ կամ վրացի մամուլի խօսքին թէ Կովկասը Ռուսաստանին հաւատարիմ է. մի՞թէ «Свѣтъ»-ի արածն արջի ծառայութիւն չէ՞ հայրենիքին։

Մենք յոգնեցինք, բայց լռել չէինք կարող և չէինք կարող ոտնատակ տալ մեր քաղաքացիական պարտաւորութիւնը։ Ինչ որ մենք ասացինք, պահանջում է մեզանից մեր խիղճը, մեզ տիրապետող մարդասէր օրէնքների ոգին և այն սէրը, որ մենք ունեցել ենք և պիտի ունենանք դէպի ռուս ազգը և նրա մամուլը։

Իսկ «Свѣтъ»-ի պէս լրագրներին յանձնում ենք մեր արհամարհանքին և թող նա իր առաջնորդողի վերջում աւելացնէ մի ազնիւ ռուս տիկնոջ խօսքերը, որն ասաց յարգելի տիկինը այդ յօդուածը կարդալուց յետոյ. «Вѣроятно авторъ упомянутой статьи психически разстроеный человѣкъ».

(Երևի «Свѣтъ»ի յօդուածի հեղինակը հոգեպէս հիւանդ մարդ է)։

Սրանից լաւ գնահատութիւն մենք չենք կարող դտնել։

—

Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնները.

Ոչ մի անգամ այնպիսի ծանր տպաւորութիւն չէ թողել հանդիսականների վրայ քաղաքային Դումայի դահլիճը, որքան երկուշաբթի մարտի 4-ին:

Այդ օրն իսկապէս չքկար այն սովորական աղմուկը, որ վերջին ժամանակներս լինում է դումայի դահլիճում, շնորհիւ այսպէս անուանուած օպոզիցիայի:

Ընտրողական ագիտացիաներին անծանօթ հասարակութեան միջից շատերը կարծում էին թէ կուսակցութիւնների մասին տարածուած լուրերը ճիշտ չեն, մանաւանդ այդ կարծիքն աւելի հաստատուեց այն ժամանակ, երբ քաղաքագլխի միակ կանդիտատ 28 ձայներով առաջարկուեց պ. Պողոս Իզմայլեան:

—Վերջացած է, ասում էին ամենքը, կընտրուի, անպատճառ կընտրուի. վերջապէս կազատուենք աղմուկներից: Հետևանքն այն եղաւ որ պ. Իզմայլեան ստացաւ 31 ընտրողական քւէ և 31 ոչ ընտրողական:

Ուրեմն պ. Իզմայլեան չընտրուեց:

Մի տարօրինակ, զարմանալի լռութիւն տիրեց դահլիճում երբ յայտնեցին քւէարկութեան հետևանքը, մի տեսակ մինչև այժմ չեղած լռութիւն, որը կատարեալ յաղթանակ էր պ. Իզմայլեանի համար: Ուշադրութեամբ դիտողը կարող էր շատ լաւ նկատել որ այդ երեք չորս րոպէ լռութեան միջոցին ոչ մի իրաւասու չէր կարողանում նայել միւս իրաւասուի երեսին: Ո՞րքան դիտելու բան կար այդտեղ. որքան հետաքրքրական էր այդ վայրկեանը, ուր մարդկային խիղճը րոպէապէս պարզում է իր դրօշակը և մարդիկների դէմքին տալիս է այն արտայայտութիւնը, որ նրանք ուզում էին ծածկել իրանց օրգանիզմի բոլոր ոյժով: Այդպիսի մի րոպէ վայելել կեանքում, ամենածանը վիշտ զգալով անգամ, կնշանակէ ապրել մի ամբողջ դար: Եւ այդ վայրկեանն իր բոլոր փառքով պատկանում է պ. Պողոս Իզմայլեանին: Նոյն հասարակութիւնը, որ կրքերի ազդեցութեան տակ վիրաւորեց իր ամենաանկեղծ բարեկամին, նոյն հասարակութիւնն ինքը ճնշուեց իր վարմունքի տակ:

Ով է պ. Իզմայլեան.—Մի ազնիւ մարդ. այսչափ կարճ է նրա պատմութիւնը. բայց որքան երկար է նրա գործունէութեան պատմութիւնը: Տասնեակ տարի շարունակ պ. Իզմայլեան զբաղուած է եղել քաղաքային գործերով առանց մի օր հանգիստ իմանալու: Մի անձնաւորութիւն, որ տարիներով անքուն գիշերներ է լուսացրել քաղաքային դպրոցների դրութիւնը պարզելու և բարեկարգելու վրայ, որ լինելով ամենաբարեխիղճ անդամ քաղաքային վարչութեան և փոխանորդ քաղաքագլխի՝ չէ դադարել լինել և դրական ամենալաւ ոյժերից մէկը. վերջապէս ով չէ ճանաչում Թիֆլիսում պ. Իզմայլեանին, այդ ազնիւ, բարի և անշահասէր յաւիտենական ուսանողին:

Մենք կրկնում ենք որ անյաջող ընտրութիւններին հետևող մի քանի խորհրդաւոր վայրկեանները կատարելապէս ապացուցեցին, որ պ. Իզմայլեանի գործունէութիւնը խոր հետքեր է թողել հասարակութեան մէջ և թէև նա այժմ կրքերի խաղալիք եղաւ, բայց ապագայում նշանաւոր դեր ունի խաղալու մեր հասարակական կեանքում:

Ս. Հ.

—

ՍՈՒՐՅՈՆԴԱԿ

Պետերբուրգ. Սիմէօն սարկաւագ Մնացականեան: Տիրացու, մենք ի՞նչ մեղաւոր ենք որ դուք թւաբանութիւն չէք սովորել: Եթէ աղքատ էք, խնդրեցէք որ ձեզ նպիրեն. այդ է պահանջում քաղաքավարութիւնը. իսկ թէ խորամանկ էք, ուրիշներին ինչու էք մեղադրում, որ նրանք չեն խաբւում: Կարդացէք բոլոր լրագրների մէջ տպւած մեր յայտարարութիւնները.—դուք ապագայում դաս էք ուզում առնա ձեզ մի թւաբանական դաս հէնց այժմ. 6 ր. եւ 3 ր.=9 եւ 28 կ. =9 ր. 28 կ.—8 ր. 28 կ.=1 ր. որի համար դուք սովորած էք գուցէ օրական հարիւր անգամ ձեռք մեկնել. բայց իմացէք, տիրացու, որ մենք ձեզ հրաւէրներ չենք տալ լրագրները „քեֆլեխ“ համարել:

Թեհրան.—Ա. Ց. Եթէ ուզում էք տպագրեն ուղարկեցէք միայն թղթակցութիւնները եւ լուրեր տեղական -կեանքից տեղական կեանքն ուսումնասիրելով ու նկարագրելով:

„ Հ. Ա. Այդ աստիճան էլ, մինէ մոր նամակը չէք ստացել. խնդրում ենք անյապաղ ուղարկել շարունակութիւնը:

Շուշի--Կարս. Ձենք տպագրի—մէկ. երկրորդ մամուլի տարբերական քաղաքավարութիւնը պահանջում է ուղարկած գրքուածքի տակ անպատճառ գրել անուն եւ ազգանուն:

Մոսկւա Լ. Պ. Ինչու աւելի ընդարձակ չէք գրում, ուրախութեամբ կը տպագրենք.

Գանձակ—Ի. Զ. Ի սէր Աստծոյ, այս ի՞նչ է նշանակում. ձեր ոտանաւորի տակ գրել էք № 1. ուրեմն դեռ №№ 2, 3 էլ է գալու. խնդրում ենք ազատեցէք մեզ ձեր սարսափելի նոմէրներից:

Թիֆլիս եւ գաւառներ—Ամենքին, որոնց մոտ գտնւում են խմբագրութեանս պատկանող զանազան գրքեր—բարեհաճեցէք խմբագրութեանս գրադարանից վերցրած գրքերը վերադարձնել շուտով:

Խմբ.-Հր. Տ. Նազարեան

Յայտարարութիւններ

ԱՐՕՐ

ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ»

Պատկերազարդ հանդէսների

Տպագրում է ամեն լեզուներով **գրքեր**, *լրագրեր*, բլանկներ, *ՑՑՑԵՏՈՍՆԵՐ*, պատկերազարդ. ամեն տեսակ տպագրութիւններ, *իր վրայ առնելով* ԿԼԻՇԱՆԵՐԻ փոխարինել տալը, **ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՆԿԱՐԵԼԸ**, *ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ*, **ԹՈՒՂԹԸ**, ԿԱԶՄԵԼՆ ու ԲՐՕՇԻՒՐ ԱՆԵԼԸ:

Հասցէն՝

Тифлисъ, ул. Головин. просп. и Баку, ул. Художественная Типографія „АРОРЪ“.

Լամպաների, կանթեղների Վենայի լաթոռների ու պատատուների Դեպո

Ե. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Դվորցովի փ. Ծովիանեանի տ.

Անհագին ընտրութիւն ամենատեսակ ապակեղէն զարդերի, սեղանի բաժակների, ծաղկամանների, ափսէների, ամենաբնտիր պատատուների և այլն։ 2—5

ԱՐՈՐԴ
художественная
ТИПОГРАФІЯ
ред. иллюстрков. журн.
„Агбюръ" и „Таразъ"
Въ Тифлисѣ
(Уг. Голов. пр. и Барят. ул.)
печатаетъ на русскомъ, Тузем. и европейск. языкахъ
КНИГИ, ГАЗЕТЫ, ЖУРНАЛЫ, БЛАНКИ, КОНТОРСКІЯ КНИГИ, ВИЗИТНЫЯ КАРТОЧКИ. Принимаетъ все возможныхъ типографическихъ работъ, приготовленіе клише для иллюстраціи. Печатаніе монограммъ для писемъ и пр.

ԳԵՂԱՊԻՐ ԱԼԲՈՄ

Մի գեղեցիկ զարդ և ամեն հայ ընտանիքի հիւրասենեակի զարդ

Լոյս կըտեսնի կարճ ժամանակում

Աշխատասիրութիւն

ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ

Բաժանորդագինը 1 ռուբ. 50 կոպ.

Ալբոմը լոյս տեսնելուց 2 ռ. փառակազմ 3.

Բաժանորդագրութիւնը ընդունում է „Աղբիւրի և Տարազի" խմբագրութիւնը։

Երաժշտական Գործիքների

Մագազին

Գ. ԿԵՐԵՐԻ

Բաժանմունքը գտնուում է Բարիատինսկի փողոցում „Աղբիւրի և Տարազի" խմբագրութեան տակ.

Ընդունում է զանազան պատուէրներ երաժշտական ամենայն տեսակ գործիքների թէ նորերի և թէ կարկատանի։ Զուգակի լարեր ամենալաւ տեսակները։ 3—3

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ
ԳԻՆՆ Է 5 կոպ

Մի մատ մի դեղ։ Ամենայն տեսակ ցաւերի դեղատոմարներ։ Դեղերի գինը էժան է։ Դեղատոմարները կատարվում են ամենայն ճշտութեամբ։ Դեղերի գինը 8-ից մինչև 6 մանեթ։ Դեղատոմարները ընդունվում են ամեն օր։ Ամենայն տեսակ դեղերը, կամ դեղատոմարները ստանալու համար դիմեցեք Հ. Գ. Ամիրեանցի դեղատանը։ 2—5

Բացուած է ստորագրութիւն Նկարիչ Պ. Տէր-Աստուածեանի գեղարուեստական պատկերազարդ ալբոմի, որի մէջ նկարուած կըլինեն XIX դարու բոլոր հայ նշանաւոր գործիչները։ Ալբոմը կըլինի փառակազմ։ Պատկերները տպագրած կըլինեն չինական շքեղ թղթի վրայ և լուսանկարը առանձին վինետայի մէջ։

Ստորագրութեան գինն է 3 ռուբլի։

Տպագրութիւնից յետոյ կարժենայ 4 ռուբլի։

Ստորագրութիւն ընդունուում է Կենսաբանական գրավաճառանոցում և Եւանգուլեա ասէլյան գործակալութեան մէջ։ 1—3

ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ
ԳԻՆՆ Է 5 կոպ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԱՐՕՐ
Գեղարուեստական տպարանի
Մամուլի տակից

Ա.
Ղ. Աղայեանց
Ա Ն Ա Հ Ի Տ

Բ.
ԱՐՔԱՅԼԻՐ
Թարգ. օր. Շ. Տէր-Նիկողոսեան

Գ.
Մուսինեանցի
ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Դ. ԱԴԱՅԵԱՆՑ
Բանաստեղծութիւններ.
Գինը . . . . . 1 ռ. 50 կ

Ամենայն տեսակ պատրաստի զգեստների պահեստ և խանութ

Ն. ԽՈՒԴԱՆԵԱՆՑԻ

Միքայէլեան կամուրջի վրայ, Միրզօէվի խանութներում։ Զգեստներ կան թէ երեխաների և թէ հասակաւորների համար և վաճառում են ամենաձեռնտու գներով։ 2—3

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՂՐԱԿԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ստացել է արդէն Թիֆլիսում և ծախւում է Կենդրոնական և Աղբիւրի վաճառանոցում։

Գինը 1 ռուբ.

Ճանապարհածախսը գնողի վրայ։

Уроки армянскаго языка, армянской исторіи и исторіи армянской литературы. Спросить въ конторѣ редакціи „Агбюръ и Таразъ". 2—10

ՕՐԱՑՈՒՅՑԵՐ 1891 թուականի, Ր. Ս.

1. Ծոցի — 5
2. Նոյնը ընտրը թղթի վրայ 20
3. Կրկնի պատերազմում 15
4. Նոյնը ընտրը թղթի վրայ 50
5. Մեծաղեղ պատերազմը ոսկեղանի վրայ — 30
6. Նոյնը ընտրը թղթի վրայ 1 —
7. Կանանց համար յատկապէս, կարելուց յետոյ ասելիքներով։ Կանանց Մեկ. Կանոնադրութիւններով 40
8. Նոյնը ընտրը թղթի վրայ — 1 —
9. Պատի—հաստատական — — 50
10 Պատի—տպական օրացոյց

Գինն է՝ Տիֆլիս Կոնտորա Ред. „Агбюръ".

ԿԱՀԿԱՐԱՍԻԲԻ (Մեբելի) ՄԱԳԱԶԻՆ

Հոդ. Արտայեանցների

Վաճառում են և վարձով են տալիս ամենայն տեսակ կահ կարասիք.—սեղաններ, աթոռներ, կահաւորակներ, բազկաթոռներ, պահարաններ, մահճակալներ, լուացարաններ։ Պատուէրի համաձայն պատրաստում ենք ամբողջ տան համար պէտք եղած կահ կարասիք ձեռնտու գներով։ Մագազինը գտնուում է Ներսիսեան դպրոցի դէմ ու դէմ։ 2—3.

Доз. цензурою, Тифлисъ 1891 г. 5-го марта Тип. „Ароръ" Т. Я. Назарьянъ. Уг. Голов. пр. и Барят. ул.